

ՆԱԽԱԲԱՆԸ ԵՒ ՎԵՐՋՆԱԲԱՆԸ

Ա. ԱՄՆՆԵՆԻՔԻ ԿՈՂՄԷ

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ



Ն Ա Ռ Ա Բ Ա Ն

Երեւանում (Հայաստան) 1966ին լոյս է տեսել Յ. Թուրշեանի «Սարգարապատի Հերոսամարտ»ը գիրքը, որի մէջ բոլշևիկ պատմաբանը կրքոտ, միակողմանի եւ պատմաբանին անվայել տշառութեամբ աշխատել է գէրոյի հասասարկելով Դաշնակցութեան դերը 1917 - 1918 հայ ժողովրդի համար ճակատագրական տարիներին, աշխատելով Դաշնակցութիւնը ներկայացնել իրրեւ սնանկացած, կործանումի շեմքին հասած, վարկաբեկուած կուսակցութիւն, որ դեր չի կատարել Սարգարապատի Հերոսամարտին:

Յ. Թուրշեան այնուհետեւ Սարգարապատի Հերոսամարտը Համարում է ժողովրդական, ժողովուրդն է մղել այդ Հերոսամարտը՝ առանց վերին հրամանատարութեան մասնակցութեան, ծրագրի ու ներշնչման, եւ ամէն ինչ վերագրում է իմբապետներին ու կրտսեր սպաններին, բայց մանաւանդ... հայ բոլշևիկներին, բառացի գրելով հետեւեալը.

«Լեպենդար (առապելական Ա. Ա.) դարձած Սակելլարիի մարտկոցի համարեալ կէսը կոմունիստներ էին՝ Արամ Կոստանեանը, Արաքս Մուրադեանը, Հեծեալների իր տասնեակն էր ղեկավարում Վահան (ներկայումս Մովսէսական Միութեան մարշալ Յովհաննէս Բաղրամեան), կրտսեր սպայ Արտակ Վարդանեանը (ներկայում գեներալ Վարդանեան) իր մարտական կրթութիւնն էր ստանում Սարգարապատում: Իր հայրենակից Ղամարչուկցիների հետ Սարգարապատ էր եկել սպարտակիստ Հատիկ Աղյոշեանը (ներկայումս «Պրապա»ի իմպադիրներից մէկը): Հեծեալադնոյում թշնամուն հետապնդում էր կոմունիստ Լիպարիտ Աթարբէկեանը» (էջ 134):

Յ. Թուրշեանի ներկայացրած այս ցանկից կը տեսնէք, որ ամենէն բարձր ղինուորական սատիճանը, կոմունիստ ղինուորականների, «տասնապետ», «կրտսեր սպայ»ի սատիճաններն են... որ ընդգծեցիք:

Յ. Թուրշեան թուում է նաեւ անունները հնչակեան իմբապետ Պանոսիտի, ու նաեւ դովեստով է խօսում «թրքական ծառայութեան սպայ՝ շատախիցի Տիգրան Բաղդասարեանի, վանեցիների գնդի հրամանատարի մստուցած ծառայութիւնների մասին, չլիշատակե-

լով, սակայն, որ Տիգրան Բաղդասարեանը (Տիգրիս) դաշնակցական էր :

Արդ, կրտսեր սպաներն ու խմբապետները դեր կատարած են, ճիշտ է, հերոսամարտի ընթացքին, բայց նրանք չեն դեկավարած հերոսամարտը, նրանք ենթակալ են եղած վերին հրամանատարութեան ծրարքին, կարգադրութիւններին ու հրամաններին :

Իրանեք նաեւ, որ 1918ին Հայաստանում դոյութիւն չունէր կոմունիստ կուսակցութիւն, այլ կային հատուկ կէնտ հայ կոմունիստներ, որոնք, ընդհակառակը, դասալքութիւն էին քարոզում, խղրայրութիւն՝ թուրքի հետ :

Այս մասին եւս զգալով, Յ. Թուրչեան գրում է. «Հինգերորդ դունդը արհամարհանքով բողբուկեան էին անուանում» (էջ 134) :

Այլև, Յ. Թուրչեան մոռանալով որ Դաշնակցութեան դերը զէրոյի է հաւասարեցրել իր դրքի մի էջում, մի այլ էջում գրում է հետեւեալը.

«Մարդարապատը բախտորոշ դոյամարտ էր, հայ ժողովրդի կորիզի կենաց ու մահուան կռիւ : Երեք տարի առաջ թուրքը կտորել էր հայ ժողովրդի ամբողջ կէսը, այսօր եկել էր վերջ տալու նրա երկրորդ կէսին : Ինքնապաշտպանութեան վերադոյն մղումով, ոտքի էին ելել հայ ժողովրդի դասերն ու դասակարգերը, հոսանքներն ու պարտիաները (կուսակցութիւններ. Ա.Ա.) : Միասնատականի հետ միասին կռւում էր կոմունիստը, դաշնակցականների հետ միասին՝ հեղահեաններն ու ռամկավարները, հոգեւորականների հետ միասին սարսուղ կիստները» (նոյն տեղը) :

Արդ, Հայաստանի կոմունիստական (բողբուկեան) պարտիան կազմակերպուել է 1920 թուի Յունիսին (տե՛ս «Հայկական Ատլաս», էջ 108, Երևան, Հայաստան, 1961 թ.) :

Իսկ ՌԿ (Բ) Պ (Ռուսական կոմունիստական - (բողբուկեան) պարտիա) Հայկական կոմիտէն՝ ԱՐՄԵՆԿՈՄԸ. կազմակերպուել է 1919 թուի Սեպտեմբերին («Հայկական Ատլաս», էջ 108) :

Ուրեմն, հայկական «կոմունիստական պարտիա» դոյութիւն չունէր 1918ի Մարդարապատի հերոսամարտին, այլ կային, միայն, ինչպէս ասացինք, հատուկ կէնտ, անհատ հայ բողբուկեանք, որոնք միացած ուսու բողբուկեաներին, կոչ էին անում հայ վիճակներին՝ չկոտել :

Յ. Թուրչեան, դարձեալ մոռանալով որ Դաշնակցութեան դերը զէրոյի է հաւասարեցրել իր դրքի մի էջում, Արամի (Մանուկեան) մասին հետեւեալն է գրում. «Արամը կարեւոր ծառայութիւններ է մատուցել ճակատամարտի օրերին»... «Հայկական բնօրրանում դե-

կազարում էր հայկական զինուած ուժերի կազմակերպումը» (էջ 135) :

Յայտնի է որ Արամը Դաշնակցական դեկափար դէմք էր եւ քայլ չէր անում՝ առանց Հ. Յ. Դ. Գերագոյն Մարմնի խորհուրդին եւ հաւանութեան : Դաշնակցութիւնը դորավից էր Արամին :

Արամը 1917ի վերջերին շահարկեց Ազգային Խորհուրդի (ՔիՓիՊ) կողմից ուղարկուեց Հայաստան, կազմակերպելու եւ վարելու հայկական ուժերը : Իսկ 1918ի ճակատադրական օրերին Արամը զոյգիտաւոր ընտրուեց Հայաստանի բոլոր հոսանքների կողմից, վարելու քախտորոշ պայքարը :

Մակայն, Դաշնակցութեան վարկին հարուածելու նպատակով, Յ. Թուրչեան վերջէն այնպէս է ներկայացնում, որ իբր թէ Արամը հիասթափուած էր Դաշնակցութիւնից 1) . . .

Բժիշկ Յովակիմ Մեղիքեան նախագահն էր Հայ Զինուորական Միութեան եւ գտնուում էր Սարգարապատի ճակատում, իր յուշերի մէջ բժիշկը գրում է. «Մեր յարթանակի հերոսներն էին՝ դորավար Սիլիկեանը, գնդապետ Դանիէլ Բէգ Փիրումեանը, Հասան Փաշայեանը, Վեքիլեանը, Դրոն եւ ուրիշներն :

Յ. Թուրչեան հակաճառում է իր գրքի մէջ, գրելով որ գնդապետ Հասան Փաշայեանը չէ մասնակցել Սարգարապատի ճակատամարտին . . .

Այստեղ է որ Երեւան է գալիս համայնափար զգաւմարանի պատմութեան նենդափոխումը եւ փաստի ուրացումը : Իր ձեռքի տակ սեննալով Հայաստանի պետական արխիւը, խօսեցնելով բոլշեւիկ «վիաներ»-ին, Յ. Թուրչեան ուրանում է գնդապետ Հասան Փաշայեանի դերը Սարգարապատի հերոսամարտին :

Աւելին. Յ. Թուրչեան, անբարեխիղճ պատմարանը, ուրանում է Սարգարապատի հերոսամարտի գնդապետ Հասան Փաշայեանի ՄԾԾ եւ գլխաւոր դերը՝ նոյն գնդապետն էր, որ Խիզնաուրի գնդի ղընդն անցած, շրջանցում կատարեց, թրքական բանակի աջ թևի թիկունքն անցնելով, եւ Քնդանօթի կապեց թուրք բանակն ու պաշարակիր սարկերը, խուճապի եւ փախուստի մասնակցով թշնամի բանակը :

«Սարգարապատի հերոսամարտ»-ը այս վերնագրի տակ, ուստի նից թարգմանելով պիտի նեկայացնենք ուրս (դերմանացի ծաղումով) գնդապետ Ալեքսանդր Ենէուրի աշխատութիւնը «Կարսի կոռսի եւ Սարգարապատի ճակատամարտ»-ի մասին, ուր մասնակից-ականատես

1) Այս էլ մի այլ տարբերակն է Ար. Մնացականեանի (սովետ պատմարան) այն միջի, որ Սերաստացի Մուրատիմ ներկայացնում է իբրեւ բոլշեւիկի Ա. Ա.

վկայ դնդ. Ա. Ենէուր յատկապէս յիշատակում է գնդապետ Հասան Փաշայեանի վճռատիան եւ հերոսական զերը Սարգարապատի յաղթանակի մէջ:

Գիտէ՞ք ինչու շտովես պատմաբանն Յ. Թուրչեան ժխտում եւ ուրանում է գնդ. Հասան Փաշայեանի դերն ու մասնակցութիւնը... ՈՐՈՎՀԵՏԵԻ ԲՈՂՇԵԻՒԿՆԵՐԸ ԳՆԻԱԿԱՀԱՐԵՑԻՆ ԱՅԻ ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ՈՒ ՔԱՁ ՀԱՅ ԳՆԻԱՊԵՏԻՆ... Ինչպէս նաեւ ԳՆԻԱՊԵՏ ՀԱՍԱՆ ԶԱԼԱԸԱՆԻՆ եւ ուրիշներին:

Պատմութիւնը, անաչառ ու արդար պատմութիւնը, հզօրապէս դատաւորն է. Յ. Թուրչեաններ միշտ չեն յաջողի ազաւաղել, այլանդակել, խեղաթիւրել եւ նենդափոխել պատմական երկաթէ փոստերը:

Ընկ. Ա. Աստուածատրեան, Հայաստանի Հանրապետութեան ակադեմիայի անդամ ինքնակից, պատասխանել է Յ. Թուրչեանի «Սարգարապատի պատմաշինութիւնը» գրքոյկով, հրատարակութեամբ Տպ. «Համազգային»-ի, Բէյրութ, 1966ին:

Ընկ. Ա. Աստուածատրեան, իր ձեռքի տակ արխիւներ չունենալով հանդերձ, զղեանիչ քննադատութեան է ննթարկել Յ. Թուրչեանի «պատմաշինութիւնը» - օտկայն ընկ. Ա. Աստուածատրեան ձեռքի տակ չէ ունեցած Սարգարապատի ճակատամարտի հրամանատարական կտրվի եւ զինուորական ղեկավարների անուանացանկը: Այդ պակասը լրացնում է սուս գնդապետ Ա. Ենէուրի նկարագրութիւնը՝ տեղերի մանրամասն յիշատակութեամբ, կռիւների պատկերասրահական յատկազօծերով եւ մի՞թ ու փոքր հրամանատարների անուններով ու նրանց կատարած դերով, որոնք նոր եւ սպանիչ պատասխաններ են «պատմութիւն շինող եւ նենդափոխող» համայնովար Յ. Թուրչեաններին, որոնք փորձում են «Սարգարապատի հերոսամարտ»ը բուլլեիկացնել...

Մահայն, նախ քան գնդապետ Ա. Ենէուրի աշխատութիւնը ներկայացնելը, անհրաժեշտ ենք համարում համարու ազնարկ նետել 1917 - 18ի Կովկասեան ճակատի վրայ, ու նաեւ այն ազգայնական ճամբաների, որոնցով դէպի Հայաստանի սիրտն էր արշաւում Թուրք ցեղասպան բանակը:

ԿՈՎԿԱՍՏԱՆ ԶԱԿԱՏԸ 1917 - 1918ԻՆ

Առաջին Աշխարհամարտին (1914 - 1918) Կովկասեան ռուս-թրքական ճակատի երկայնութիւնն էր 1000 կիլոմէթր, իսկ լայնութիւնն ու խորքը՝ երբեմն մօտ 400 կիլոմէթր:

Ճակատի երկարութիւնը ձգում էր Սեւ Մովի, Տրապիզոնի արեւմուտքից, իջնում մինչեւ Գեմախի եւ Երզնկայի միջեւ, ապա

Ճապարակներ, Մուշ, Բիթլիս, Մոկս, իջնում մինչև Մեծ Չուսը դեպք-
ապա աշխտեղից հարաւ-արեւելք, մինչև Քերմանշահ (Պարսկաստան) :

Ճակատի լայնքն ու խորքը, ուստիան սահմանից (Սարիզամիշ)
մինչև Ճապարակներ, մօտ 400 կիլոմետր էր :

Երբ տեղի ունեցաւ Հոկտեմբերեան Յեղափոխութիւնը Ռուսաս-
տանում եւ հնչեց բուլշևիկներէ կոչը՝ «վերջ պատերազմի», «դէպի
տուն» նշանաբանը, ուստի-թրքական ճակատի մօտ 500,000 ուստիան
զօրքը սկսեց լքել ճակատը եւ, ձեռքն ընկածը կողոպտելով, Զարդելով,
խմել-հարթելով, հեղեղի եւ անդուխտ հօտի նման նահանջեց դէպի
Կովկաս, աշխտեղից էլ՝ Ռուսաստան : Ճակատն սկսեց ամայանալ,
դատարկուել, մնալ անպաշտպան :

Ռուս - թրքական ճակատի ցարական բանակի մէջ կային մէկ
քանի «Հայկական բաւարչիոններ» 1) (դումարտակ), ինչ դումարտակի
հրամանատարն էր դնդ. Բէջանիէկովը, 2րդ բաւարչիոնի հրամա-
նատարի սնունը չէ յիշուած, իսկ 3րդ հրացանաձիգ դումարտակի
հրամանատարն էր գնդապետ Տէր Նիկողոսեանը, 4րդինը՝ գնդապետ
Յովսէփեանը, 5րդինը գնդապետ Փիրուսեանը, 6րդինը գնդապետ
Մելիք Մուրադեանը : 2)

Այլևս Կովկասեան դործօն բանակի հրամանատարական կազմի
մէջ էին հետեւեալ հայ ղինուորականները՝ 17րդ թուրքաստանեան
հրացանաձիգ դնդի հրամանատար՝ գնդապետ Օսիպով (Յովսէփեան),
Կովկասեան հրացանաձիգ զօրաբաժնի հրամանատար՝ զօրավար
Նալբաբէկեան, 6րդ Կովկասեան հրացանաձիգ դնդի հրամանատար՝
Սիլիկեան : 3)

Մինչև 1917 թուի Յունուար 1ը այս բոլոր ղինուորական միաւոր-
ները Կովկասեան ճակատի վրայ էին :

Արդ, երբ բուլշևիկները քայքայեցին կովկասեան ճակատը, ուստ
զօրքը «դէպի տուն» դիմեց, վերոյիշեալ բոլոր հայ ղինուորական
հրամանատարները մնացին ճակատի վրայ, աշխատեցին պահել նաեւ
հայկական դումարտակների ղինուորներին : Յայտնի չէ ևւ աղբիւրներ
չկան, թէ ոչքա՞ն էր այդ հայ ղինուորներէ թիւը : Մակայն հայ նախ-

1) Հայկական կամաւորական գունդերը՝ Անդրամիկի, Համազասպի,
Իրօի, Քեռիի եւ Իշխան Արզաւթեանի, արդէն լուծուած էին
ցարական հրամանով : Ա. Ա.

2) Տե՛ս «Համաշխարհային պատերազմը կովկասեան ճակատի
վրայ», ուստրէն աշխատութիւնը, հեղինակ՝ Ե. Վ. Մալոզվսկի, էջ՝
488, 490, 495. Փարիզ, 1923 թ. Ա. Ա.

3) Նայն տեղը՝ էջ 493 : Ա. Ա.

կին կամաւորներէ, Ֆէդայիներէ եւ մարտիկներէ հետ միասին հաշուած, հազիւ 20-25,000 հայ մարտիկներ մնացին հսկայ ճակատի վրայ որ կրճատուած վիճակում իսկ աւելի քան 500 կիլոմետր երկայնութիւն ունէր:

Ասինք նաեւ, որ ռուս ցարական զինուորին հրամանատարութիւնը, նախ քան յեղափոխութիւնը, մտադրութիւն է ունեցել «Ի պահանջել հարկին» պարպել ամբողջ կոմիտասեան ճակատը մինչեւ կոմիտասեան լեռնաշղթան, պահելով միայն ձախ թելի վրայ ընկած նաւթարդիւնարեքական կենտրոն՝ Բաղուն: Այս առթիւ յատկանշական է կոմիտասեան ճակատի գլխաւոր ստրատեգիայի անգամ Ե. Վ. Մասլոֆսկու հետեւեալ վկայութիւնը որ մէջ ենք ընդունւած թարգմանելով. —

... «Թուրքերի եկայական ոյժերի գերազանցութեամբ եւ սահմանագծի վրայ մնալու անհնարինութեամբ պարագային, արտիքանարար մտաւորել դէպի կոմիտասեան լեռնաշղթայի գլխաւոր գիծը, օգտագործելով նրա դժուարամտայնութիւնը, եւ պահել նրա ծայրագոյն ձախ քելի վրայ գտնուող կարեւոր տնտեսական կենտրոն Բագում, նրա նաւթային հարստութիւններով, — իսկ կենտրոնում՝ Ռագմա — վիրական նամբան, որպէս կարճագոյն կայի նամբայ Ռուսիոյ կենտրոնի եւ Անդրկովասի միջեւ» (Ե. Վ. Մասլոֆսկի, «Համաշխարհային պատերազմը կոմիտասեան ճակատում 1914 - 1918թ.» էջ 31, Փարիզ, 1933թ.):

Ցարական հրամանատարութիւնը չգործադրեց այս ծրարչիւրը, որ վերջ պիտի տար կոմիտասեան յոյուսթեան, թրքական արշաւանքի եւ գործադրելիք շարքի հետեւանքով, սակայն այն, ինչ որ շարաւ ցարական հրամանատարութիւնը, արաւ բողջելիքով, «դէպի տուն» նշանարանով, ամբողջ կոմիտասեան յոյուսթեանը թողնելով թրքական արշաւող բանակներէ դէմ առ դէմ ...

Ի՞նչպէս կարող էր հայութիւնը իր փոքրաթիւ եւ անկարգակերպ ոյժերով (որովհետեւ բողջելիները քայքայել էին ամէն դինուորական միաւոր) դէմ դնել թրքական վիթխարի բանակին, որի դէմ ցարական 500,000 բանակը դժուարութեամբ էր կուտում:

Ուրեմն՝ ճակատը պիտի կրճատուէր, նահանջը անխուսափելի էր. ճակատը պիտի կրճատուէր այնքան, որ հայկական փոքրաթիւ ոյժերը կարողանային դէմ դնել վիթխարի ոյժերով առաջադիմ արիւնարբու ցեղասպանին:

Կարեւոր ենք համարում այստեղ նշել նաեւ տ'յն բոլոր ռազմագիտական ճամբաները, որոնցով առաջանում եւ գրահում էր թրքական բանակը:

Ինչ պատահելի՞ մենք եղած ենք այդ ճակատի վրայ, 1918ի սկիզբը, հետեւաբար ծանօթ ենք նաեւ տեղագրութիւններին, ամբողջիւններին եւ ճակատի վիճակին:

ԹԻՔԱԿԱՆ ՉՕՐՔԵՐԻ ՅԱՐՁԱԿՈՒՆ ՃԱՄՐԱՆԵՐԸ

Ա. Ճամբայ.

Երզնկա, Ինքնան, Էրզրում, Դէվէ Բոյնու, Բասէն, Հասան Ղալա, Քէոփրի Բէոյ, Խորասան, Չիվին, Կարաուրզան, Սարիղամիշ, Կարս, Ալեքսանդրապոլ, Անի եւ Արաքս կայսրանները, սպա՛ Սարդարապատ:

Սա թրքական բանակի յարձակման ամենէն կարեւոր ուղղութիւն - ճամբան էր:

Բ. Ճամբայ.

Էրզրում, Դէվէ Բոյնու, Բասէնի դաշտ, Օլթի, դէպի հիւսիս արեւմուտք՝ Արտահան, Ախալքալաք:

Այս ճամբին, Արտահանից մի զորասիւն կ'երթայ դէպի Կարսի թիկունքը եւ դէպի Ալեքսանդրապոլ:

Այս ճամբան նուազ յարմար է, լեռնոտ է եւ կիրճեր կան: Մեծ դործողութիւնների դէպքում շրջանցման համար է, եւ ճամբան կը Հասնի Քորագերան կայսրանը որ Ղարաքիլիսէից անմիջապէս հիւսիս է դանում:

Ղարաքիլիսէի վրայ այս դժով սուղացու թուրք զորամասը:

Գ. Ճամբայ - Թօփ Եօլի.

Օլթիի եւ Բասէնի դաշտի մէջտեղից, մի ասունմին ճամբայ է լեռնաշղթայով, Հասան Ղարայի եւ Բարդուս դիւղի վրայով դէպի Սողանլուխ, շրջանցման դիժ Սարիղամիշի թիկունքը:

Թօփ Եօլի (Թնդանօթի ճամբայ) է կոչուած որովհետեւ այդ ճամբով ամառ թէ ձմեռ Թնդանօթիներ կարելի է անցկացնել, դնում է մինչեւ Մերդենեկ, (Եախկին ռուսական սահմանը). սպա ճամբան բաժանուած է դէպի Կարս եւ Արդահան (Պասկեւիշի ժամանակ, 1828 - 1829ին, յայտնի էր այս ճամբան, որից, երկու կողմերն էլ՝ ռուս եւ թուրք, ռազմախաղերի համար էին օղտուած):

Դ. Ճամբայ.

Այս ճամբան սկսուած էր Մոսուլից, սպա Ռեւանդուզի վրայով Հասնում է մինչեւ Աւրմիա: Չափազանց լեռնոտ է այս ճամբան, սուանձնաշատուկ՝ միւս ճամբանների համեմատութեամբ: Այս ճամբի վրայ, Ա. Ալիարհամարտին, բուռն կռիւններ տեղի ունեցան 1):

Դէպի Աւրմիա թրքական մի զորասիւն, 1918ին, շարժուեց Վանայ լճի հարաւ արեւելքից, Հանդիպելով Աւրմիոյ Կաշիակցական ութերի

1) Ռեւանդուզի մէջ էր որ երոսական մահ ունեցաւ Հայ Կամաւորական 4րդ գնդի հրամանատար Քեռիմ:

բուռն ընդդիմութեան :

Ե. Ճամբայ .

Դէպի Պարսկաստան արշաւի մի այլ դիժ եւս կար , որ բաժանուով էր Բիթլիս-Մուշ - Մանազկերտ - Դիադին ճամբից եւ դնում դէպի Մակու , իոյ եւ Ղարաղաղ ու Թաւրիզ :

Զ. Ճամբայ .

Չգւում էր Սեւ Մովի սփռով , Տրապիզոն , Ռիզէ , Լադիսթանի վրայով դէպի Բաթում :

ԹՐԹԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՅԱՌԱՋԻՆԱՂԱՅՈՒՄԸ

Թրքական բանակը անխուսափելիօրէն առաջ պիտի շարժուէր , քանի որ ուս բանակը , բուլղելիացած , անպլուխ հօտի պէս զդէպի տունն , Ռուսիոյ ճամբուն էր բռնել , փլուզումի ենթարկելով ամբողջ ճակատը :

Թրքական բանակը մեր յիշատակած բոլոր ճամբաներով սկսեց յառաջանալ , սակայն յարձակման դիմաւոր ուղղութիւնը Երզնկա , Էրզրում , Հասուն Ղալա , Բէօիլի Բէոյ , Սարիղամիշ , Կարս , Ալեքսանդրապոլ դիժն էր :

Թիֆլիզում նստած Հայոց Աղղային Խորհուրդը կարգադրութիւններ էր անում , գործիչներ եւ մարտական ղեկավարներ եւ ոչոք որ պարկում Թրքահայաստան , Ճակատը պահելու համար : Կարգակերպում էր Զէյթունեան եւ այլ հայկական դուռներ :

Թիկունքում դաւադրում էին Ազրբէյջանցիները եւ վրացիները , դադանի յարաբերութիւններ մշտնկերով թուրք հրամանատարութեան եւ քաղաքական - դիւանագիտական շրջանակների հետ :

Թէ բուլղելիցմը ինչ աւելներ էր դորձում կավրաւան ճակատի վրայ , նոյն իսկ Հայ վիճուորների շրջանակներում , այդ երեւաց Երզնկայի մօտ , Իլիջայում , ուր դանում էին Անդրանիկը , Սերաստացի Մուրադը , Սեպուհը , Կնդապետ Թորգոմը 2) : Հայ վիճուորներ ըմտասացան եւ նոյն իսկ կրակեցին մերձեց վրայ . . . բուլղելիացել էլի եւ շէին ուղում կռուել : Եւ սակայն հայրենատէր ու վստանչին դիտակից վիճուորներ կռուեցին :

2) 1918 թուի Փետրուարիմ , Թորգոմը նոյն իսկ Հայաստանի անկախութիւնը հռչակեց Էրզրումի մէջ , հայ զինուորների ոգեկանը բարձրացնելու մտադրութեամբ . սակայն կանչուեց Թիֆլիզ եւ Հայոց Ազգային Խորհրդի կողմից դիտադրութեան արժանացաւ , որովհետեւ վրացիներն ու ազրբէյջանցիները կարող էին մեզ մեղադրել անգաւտողականութեան մէջ :

Նահանջը անխուսափելի էր. էրզրումը իր ամբողջիւններով թէեւ մեր ձեռքն էր, սակայն բաւարար ոյժեր չկային դէմ դնելու համար անագորոյն թշնամուն: էրզրումի թնդանօթները նոյն իսկ լուս մնացին, որովհետեւ անխորձ ուսանող — կամաւորներ էին դրուած թնդանօթների վրայ... Մասնապէսների կազմը պոյութիւն չունէր:

Թրքական բանակի աջ թևի մի զորասիւն, Գիստըին — Բայազէտ դժով մուտք գործեց Հիւսիս — արեւմտեան Պարսկաստան՝ Ալի Էհսան փաշայի հրամանատարութեամբ: Առաջին հերթին մուտք գործելով Մակու, Ալի Էհսան կոտորեց Մակուի հայութիւնը. ապա անցաւ նոյ 1), ախտեղի հայութիւնը եւս շարժեց: Սոյի տակ տեղի ունեցաւ Անդրանիկի զօրամասի բաղխումը Թրքական բանակի հետ, սակայն Անդրանիկի ոյժերը բաւարար չէին. իր զօրամասով նա անցաւ Զուլֆա, ապա դէպի Նախիջևան:

Թրքական բանակի մի զօրասիւն անցաւ Ղարապաղ եւ Ղարդեց Գլմարի շրջանի 5-6 հայ դիւղերը: Ալի Էհսան փաշան մտաւ Թաւրիզ, 18 հայ ականաւոր դէմքեր պատանդ վերցրեց եւ, Թաւրիզի հայութիւնը եւս պիտի շարժէր, եթէ Ալի Էհսան ստիպուած չլինէր արաղօրէն նահանջելու:

Այդ օրերին Սալմաստի եւ Աւրմիսայի հայութիւնը, ղեկավարութեամբ Զ. Յ. Դաշիակցութեան, կազմակերպեց պինուորական — կամաւորական դնդեր եւ հինգ հերոսական ճակատամարտներ մղեց Թրքական բանակի դէմ 2): Աւրմիս էր հասել Ղանի պապիականութեան մի մասը, ղեկավարութեամբ Կոստիա Համբարձումեանի: Աւրմիս եւ Սալմաստի հերոսամարտի կազմակերպիչներն էին՝ Կոստիա Համբարձումեան, Բուլղարացի Գրիգոր, Լեւոն Շաղոյիան, Սամսոն (Քրիստափոր Միքայէլեանի զրոյնորդին), Սամուէլ Մեքրոպեան, Արտաշէս Ստեփանեան (ցարակոն բանակի սպայ) Յարութիւն Սարգիսեան (Մասունցի Յարութիւն), Սուրէն Աբամեան, Զ. Յ. Դ. Կապուտասնի (Աւրմիս շրջան) Կոմիտէն, Յ. Զեքմակ որ Աւրպատականի Զ. Յ. Դ.

1) Մակուի եւ նոյի ջարդերից փոխադրած հայ որբեր կան Իրանում, որոնք քրքական ջարդերի սարսափն ապրեցին 1918ին: Ա. Ա.

2) Այս կարեւոր դիմադրութեան մասին, դժբախտաբար, շատ քիչ բան է գրուած: «Հայրենիք» ամսագրի մէջ (Բոստոն) ընկ. Ազգին նկարագրել է Աւրմիս շրջանի կռիւներն ու գազքը: Նաեւ այդ շրջանի ճակատամարտների պատմական նշանակութեան մասին յիշատակութիւն օրնեմ մեմօ, «Զ. Յ. Դաշիակցութիւնը Պարսկաստանում» մեր աշխատութեան էջ 180ի մէջ, լոյս տեսած 1950իմ, Թեհրան, Դաշիակցութեան 60ամեակի առիւ: Ա. ԱՄՌԻՐԵԱՆ

«Վրէժ»-ի կենտրոնական կոմիտէի ներկայացուցիչն էր :

Սարմաստի և Ռւրմիոյ, 2-Յ. Իաջնակցութեան կազմակերպած հերոսական ճակատամարտները¹⁾ այն վճռական դերն ունեցան, որ դանդաղեցրին թրքական բանակի աջ թևի բազմական դործողութիւնները, այդու Արարատեան դաշտի հայկական կազմակերպութիւնները ժամանակ շահեցին (չորս հինգ ամիս) կազմակերպելու իրենց դիմադրական ոյժերը :

Ռւրմիոյ և Սարմաստի հայկական դիմադրական ոյժերը հնարաւորութիւն չունեցան կազուակէտ և ժխանալու Անդրանիկի ոյժերին : Միւս կողմից, մեր «կաշնակից» անգլիական ոյժերը ևս օգնութեան չհասան, ուստի Ռւրմիոյ և Սարմաստի հայութիւնը հարկադրուեց, վերջիվերջոյ, բռնելու զայլ թափանկի ճամբան դէպի Սոյիսկալա-Համադան - Բատրուպէ, ճամբին մէծ կորուստների ենթարկուելով : Այդ նահանջի ճամբին էր սր սպանուեց անդուդական ժողովրդական դործիչ, դաշնակցական Կոստիա Համբարձումեանը, դէժ առ դէժ գալով անգլիացի գինուորականների համազգեստով ծպտուած թրքական մի տասնեակիէ) :

* * *

1918 թուի Մարտ 1ին, հայկական ոյժերը նահանջեցին մինչև ռուս-թրքական սահմանը : Այդտեղից ենք սկսում ցարական բանակի սպայ՝ Հայկական Սոցյակոյաի անդամ՝ ԱԼԵՔՍԱՆՂՐԱՆՍԻ Ա. ԵՆԵՌԻՐԻ ՅՈՒՇԵՐԸ որ թարգմանել ենք ռուսերէնից, Լոս Անջէլոսում (Կալիֆորնիա) յոյս տեսած ռուս տարադիրների «Համաձայնութիւն» («Սոզլասիէ») մասադրի թիւ. 165, 167, 168, 169, 170 (1965 թուի) և 171, 172, 179 (1966 թուի) :

Հեղինակի հիւանդութեան պատճառով, մերթ ընդ մերթ ընդհատուած էր յուշագրութիւնը :

1) Թրքական ծպտուած տասնեակը, անգլիացի զինուորականներ ձեռնաչափ, մշան է տալիս մտեմալու . Կոստիան իր ձիաւոր տասնեակով մտեմում է եւ երբ պիտի խօսէին, թուրք սպան իր սրով մեղքում է Կոստիայի ուր . . . Կոստիայի թիկնապահները անմիջապէս ուշի գալով, իրենց մարզէրներով հնձում եմ թուրք դուադիրներին : Կոստիայի վերջին խօսքն է լինում՝ «Ընկերներ, հնձ թողէ՛ք. ծպտվաւրդին հագ տարէ՛ք» . . .

Կոստիան թաղուած է իր նահատակուրեան վայրում : Ա.Ա.

ՀԱՅ - ԹՐԹԱԿԱՆ ԳԱՏԵՐԱԶՄԸ

(1917 - 1918)

Գրեց՝ ԳԼԽԱԼՈՐ Սպայակոյտի Գնդապետ՝

ԱԼԵՔՍԱՆԴՐ Կ. ՇՆԷՈՒՐ

Մասնակցողի Յուշեր

ԹՐԹԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻՑ ՄԻՆՁԵՒ ԿԱՐՍ

ՌՈՒՍԱԿԱՆ ՀՈՂԻ ԿՐԱՅ

1918 թուի Մարտ 1ին, հայկական դինուորական վերջին միաւորները թողին հեռացան Թուրքիայից: Յիտնագրած գունդը՝ Դրօի (գրաստամատ Կանաչկան) հրամանատարութեան, տակ, յանձինս նրա ունէր արժանաւոր, խիզախ ղեկավար որ մնում էր Կարաուրգանի շրջանում: Նրա առջեւ՝ փոքրիկ թիկունքային ջոկատ՝ 30 մարդուց, փոքապետ Թորգոմի ղեկավարութեամբ: Դէպի աջ, այսինքն գէպի հիւսիս այդ «ապիջից» - ոչինչ: Մահի, ոչ ոքի կողմից չընկնում տարածութիւն:

Մակայն այնտեղ, Բարդուսի անցքից հիւսիս, ձգւում էր անհասարակ ճամբաների ցանցը կրկրամից, որ հնարաւորութիւն էր ապրիս Թուրքերին բանելու մեր աջ թիւը և ուղղակի դուրս դաշու կարսի վրայ:

Այդ շրջանը, ըստ վրայիների հետ սենեցած համաձայնութեան, իրենք սխտի գրաւէին: Մակայն այնտեղ չկար ո՛չ մէկ վրացական դորամաս: Վրացական բանակը կողմակերպուում էր, կողմակերպուում և սակայն ճակատ դուրս չհիտու: Այդ մեր «ԱՔիլլէսեան կրուսկ» էր:

Հայկական բանակի ձախ թեւք գտնւում էր Մնուսի ջոկատի պաշտպանութեան տակ, որ քաշուեց Կարաւորտ և Կողղուան, ուր աննկարող ընդի ջարդ տեղի ունեցած էր: Բայց այդ շրջանը մի կողմի վրայ էր և այդ կողմից շուտով Թուրքերի երևալը չէր սպասւում: Մանուածդ որ ձիւններն էլ այնտեղ չէին հարուած:

Իրգրումի շրջանը գրաւելուց յետոյ, Թուրքերը միառժամանակ կանց առան: Միառժամանակ Մարիկամիշում տնդոյցին աշխատանք էր կատարուում հայկական դորամասերը կարգի բերելու, տեղափոխել և դառնալով թաղութիւնից նոր դորամասեր կառուելու համար: Կողիասեան Բանակի Սպայակոյտը անուանափոխուած էր Հայկական Առանձին Զորաբաժնի Սպայակոյտ սնուհով և գտնւում էր Ալիբաանդրապոլում: Նրա հրամանատարն էր գորտիար Կարաբէկովը (Կարաբէկեան), բաջ,

ազնիւ եւ ամենքից տիրուած : Մագնումով նա հայ էր՝, սակայն իրեն ռուս էր համարուած եւ չայերէն չէր խօսուած (Այստեղ Ենէուր սխալուած է, թէ ևս զօր . Նազարրէկեանը չայերէն չգիտէր, բայց իրեն հայ էր համարուած : Ա. Ա.) :

Մարտ 8ին թէ 10ին մեր Առաջին Յատուկ Հայկական Վաշտը, որի հրամանատարն էր ընդհանուր սպայապետ Սորէլ, իսկ ևս վարչիչն էի նրա սպայապետ Սորէլ, — անցաւ Նովո-Սելիմ 1) : Նրա պարտականութիւնն էր՝ պաշտպանել աջ թեւը եւ միտմամանակ նա ընդհանուր պահեստի ոյժ էր :

Բայց այդ վիճակը կրկար շտեւց : Մարտ 16ին, զնդապետ Թորդոմի ջնկատը սրաշարուկ քրդերի կողմից : Նա քաշուեց Իրօի յետնապահ գունդի մօտ : Եւտով քրդերի յետեւից երևացին թրքական կանոնաւոր զօրամասեր եւ Իրօն դանդաղօրէն քաշուեց Սարիղամէշ, իսկ նրա ետեւից շարժուած էին թուրքերը : Մենք ճշգրիտ տեղեկութիւններ չունէինք, քանի որ թուրք զեքիներ չէին վերցուած եւ մենք էլ, գրա վրայ չէինք անդում : Մտկայն որոշ փաստաթուղթերի հիման վրայ կարելի էր հաշուել, որ յարձակում էին թուրքական 12 և 36րդ զօրարածիները : Այն ինչ որ մեզ՝ ռուսական հին սպաներիս համար պարզ էր՝ էրզրումի նահանջով պարզ կրեւաց նաեւ միւս հրամանատարական կազմին որ պէտք էր նահանջել մինչև Կարս, ուր կային ուժեղ բերդային գիւրջեր, ուժեղ հրետանի եւ ուր հասնում էին ազգին թիկունքում նոր կազմակերպուած թաքմ զօրամասեր : Այնտեղ (Կարսում) կարելի էր դիմանալ բաւական երկար ժամանակ, մինչև որ հայ բնակչութիւնը կը պարպէր ու կը հեռանար գէպի ռուսական Հայաստան :

Մարտ 15ին ևս հետազրով կանչուեցի Ալէքսանդրապոլ, բանակի սպայապետը : Այնտեղ ևս ցուցմունք ստացայ հետադատիչ աշխատանք կատարել Չարլեանցի յետնաշրթայի, որ իշխում էր Կարսի բերդի վրայ հիւսիս-Արեւմուտքից և ոչ մէկի կողմից չէր գրաւուած : Այժմ, մինչև որ հետեւանքով, նա յարձար ճամբայ էր մեր աջ թեւի շրջանգումի համար :

Մեկնեցի Կարս : Ներկայացայ Բերդի պարէտին, իսկ յաջորդ օրը, տեղին ծանօթ սպաների ուղեկցութեամբ, մեկնեցի հետադատիչ աշխատանքի :

Օրը դորշ էր եւ ցուրտ : Մերթ անձրևի պող կաթիլներ, մերթ

1) Մայրականների գիւղ էր : Ա.Ա. :

ձիւնի փաթիլներ էին քնկնում: Ճամբան ձգւում էր մալախանների մի գիւղի եւ «Լորիս Մելիքով» ամբուլթեան մօտով: Անվերջ ստոյաներով ճամբան ձգւում էր Կարս Չայ գետի հովիտով դէպի լեռնային բարձրաւանդակը:

Լովիտներում արդէն լրիւ պարուն էր: Տեղ – տեղ մեծադիկներ կային, իսկ լեռների վրայ նստած էր հալուող ձիւնը: Իմ քարտէզիս վրայ, Չարդհաուրը նշուած էր «1000», լայն քարակղի թերթը պատուած էր եւ մասշտաբի մասը չկար: Վճռեցի, որ դրանք սաժէններ են (մէկ սաժէնը վեց ոտք է. Ա. Ա.), իսկ Կարսը գտնւում է 5000 ոտք բարձրութեան վրայ, կը նշանակէ հա պիտի բարձրանայի 2000 ոտք (մօտ 300 սաժէն):

Վերը ձիւն էր նստած: Ամպերը կուտակւում էին: Սկսեց ձիւնի: Չորս կողմս՝ ժայռեր: Շուտով խնուդին ծածկուեց թանձր ձիւնի տակ, միայն դարասիււղի շուրթը ազատ էր ձիւնից:

Լեռնային վտակների վրայ կամուրջներ չկան, սարսափելի դժուարութիւններ: Զիւրի սանձից բռնած ենք գնում, վասնզ Կայ անդունդը գլորուելու:

Շարունակութիւնը՝ աւելի ու աւելի վատ: Խնուդին միանդամայն ծածկուած է ձիւնաճիւղի տակ: Զիւրը թողնւած ենք: Վերցնում եմ երկու զինուոր եւ մաղլցում եմ վեր:

Ժամը 3ին մենք Չարդհաուրի գաղաթին ենք, եւ բուրի միջից եւ կողմնորոշւում եմ: Ինձ համար պարզուած է, որ 2-3 շաբաթ յետոյ, երբ ձիւնը հալուի, թուրքերը դիւրութեամբ կարող են այտեղոյ անցնել, չրջանդելով բերդի ծալքագոյն ամբուլթեաները եւ դուրս գալ նրա թիկունքը, Պրոխյադնոյէ եւ Մաուրա գիւղերի վրայ: Նոյնպէս պարզուեց, որ Չարդհաուրը պիտի դրաւուի դօրամասերի կողմից որպէս դիտողական կէտ, այսպէս նա կը ծածկի թուրքերի բոլոր շարժումները:

Չարդհաուրի գաղաթին նշանակուած զինուորական ցիցերը ծածկուած էին ձիւնով, ուստի ես չսինտոնեցի. այդ չկար իմ հրահանգի մէջ:

Շուտով սկսեց մթնել. ինչ որ օրէտք էր պարզել, պարզել էի: Սարսափելի դժուարութիւններով խառարի եւ թանձր մշուշի մէջ, մենք վառ իջանք Կարս Չայի հովիտը:

Ամսի 17ին եւ 18ին շարունակեցի իմ հետադասութիւնը: Գիշերը հասանք Տարած – Վարդատու եւ աջտեղ գիշերեցիներ: Ամսի 18ին գննեցի՞նք ամբուլթեաները: Նշանակալից են Քոյուկ Թալու յետոյ ամբու-

Թիւնները: Լեռան մէջ փապուղի է փորուած, փոքրիկ անցք սննի որ
աննկատելի է յարձակուող թշնամու համար եւ թաղցնում է Թնդանօթի
խողովակը: Իսկ նրա վրայ՝ վիթխարի մի ժայռ որը չի խորտակուի ոչ
մի Թնդանօթից:

Այո, նշանակալից սմբութիւններ էին, քարերի մէջ փորուած
խրամատներ որոնք միանգամայն անտեսանելի են թշնամուն, իսկ միւս
կողմից սմբոցի սաջևի տարածութիւնը կտրուած էր, որ դիւրացնէր
մօտեցումը թշնամու: Մանրամասնութիւնների մէջ չափաի մտնեմ,
բայց ասեմ, որ ամէն ինչ բերդի համար հիանալիօրէն մտածուած էր,
ծածկուած էր թշնամու աչքերից եւ պաշտպանուած... Բայց պէտք էր
պաշտպանողների հսկայ թիւ, ինչ որ՝ չկա՛ր: Բերդի միայն հարսուա-
յին հատուածը, որ 18 վերստ է արտաքին սմբոցների դժի վրայ, պէտք
ուէր 15,000 պաշտպանողների, մինչդեռ մենք ունէինք միայն 6-7
հազար: Թշնամին, ի հարկէ, թեւերը չըջանցելով, կ'անցնէր բերդի
հրախային կողմից եւ կը դիմէր Ալեքսանդրայոյ: Առաջարկում էին
պաշտպանուել սմբոցի ներքին պոստ, բայց դա էլ շատ անօդուտ էր
սակտիկական տեսակետից, բանի որ թեւերը պաշտպանուած չէին:

Բերդը ունէր 800 Թնդանօթ, մինչդեռ Թնդանօթաձիղներ համար-
եա՛ չկային: Ես մեկնեցի Ալեքսանդրայոյ, բանակի սպայակոյտը:
Ամէն ինչի մասին պեկուցելի գորավար Նազարբէկեանին եւ Ընդհանուր
Սպայակոյտի գեր-գորավար Չիլիկեիչին, եւ նոր պաշտօն ստացայ՝
որպէս Երկրորդ պոստարտակի սպայակոյտի վարիչ, այդ պարտակա-
նութիւնը կատարելու:

Պէտք է շտապ մերստանայի, գործերը յանձնելու զնդապետ
Մորէյին եւ դարձեալ շտապով մեկնէի՝ նոր պաշտօնով պրայուելու
համար:

Այսպէս, իս շտապ մեկնեցի նոր պաշտօնատեղիս, որպէս Հայկա-
կան Երկրորդ Յատուկ Գումարտակի սպայակոյտի վարիչ:

Գումարտակի մասին ես դիմէի հետեւեալը:

Էրդրումից ես յանոխ խօսում էի Մնսւսկաբայի հետ, ուր կանդ-
նած էր այդ գումարտակը, որ մեր ձախ թիւը պաշտպանողն էր:

Մեր՝ էրդրումից նահանջելու օրերին՝ նա եւս սկսեց նահանջել
դէպի Ռուսական սահմանը, անցնելով Կարու Կուրտի վրայով՝
Կաղզուան:

Ամենուրեք մեծ ջարդ: Լիակատար փլուզում: Գումարտակի
հրամանատարը մեկնած էր, նրա սպայակոյտի վարիչ՝ զնդապետ
Սպիցրին նոյնպէս մեկնած էր թիկունք:

Քրդերի կողմից չըջապատուած դամարտակը ճեղքելով ճամբայ քացած էր մինչև Պասլինի Կիրճի Պասլին դիւղը: Նրա մարտիկների թիւը մեծապէս ընկած էր, իսկ մարտունակութիւնը՝ անլի եւս: Նման պայմաններում իմ առաջ դրուած էր դժուարին, ասեմ՝ անլուծելի խնդիր՝ դէմ կանդնել թուրքերի կանսնուտը զօրամասերի, որոնք արբած էին ուս զօրքերի մեկնումով թուրքական հողերից եւ անզուսպ ատելութեամբ լցուած դէպի-հայերը, մանաւանդ որ նոր էր տեղի ունեցել Կաղզուանի տակ ջարդը:

Ապրիլ 20ի դիշերը Կորս հասայ եւ այնտեղ հասկացայ որ դործը շատ վատ էր: Թրքական կանսնուտը զօրամասերը արդէն Սարիզամիշ էին հասել, իսկ Կարսում շատ քիչ բան էր արուած, զօրքերի ուղին էլ՝ ընկած էր:

Եւ սակայն բանակի հրամանատարական կաղձը տեղափոխելու աշխատանք էր կատարում զօրքը վարժեցնելու եւ կայմակերպելու զօրծուծ: Բայց զօրամասերը լրացնող բազմութիւնները իրենց երկուսթով ոչ մի շաւ բան չէին խոստանում:

Ինձ պաշտօնի կոչելու ժամանակ, թուրքերը արդէն ոտք էին դրել ուսական հողի վրայ: Չատուղուած տուեալներով՝ դրանք 12րդ եւ 36րդ հետեակ զօրաբաժիններն էին, որոնց հրամանատարն էր դերմանացի մի զեդապետ:

Արեւածաղին, ինձ շողեչարժի վրայ հասցրին այն կայարանը որ դանուււմ էր Բէդլի Ահմէտ դիւղի գիմաց, ուր եւ թողի էի իմ Առաջին Բատուկ Գումարտակը:

Արեւը լեռների յետեւից բարձրանում էր: Լուում էր հրեամանու կռուի որոտ: Թնդանօթների հարուածներ: Ծուխի հսկայ քուլաներ, հրդեհներ էին բարձրանում Սարիզամիշից: Թոզնելով շողեկառքը, եւ իջայ, բռնաւորուած բարեկեցիկութիւն որոնք պիտի հասցնէի զեդապետ Մորէլին, եւ քայլեցի դաշտի միջով: Դիմացս, բլրի վրայ դանուււմ էր Բէդլի Ահմէտը, ծօտ մի փերտի վրայ: Ես կեցաւ իմ կողմից, իսկ երբ ես կէս փերտ հետացայ կայարանից, այնտեղից լսելի էին ընդհատ կրակոցներ: Եարուեսեկեցի ճամբաս եւ յանկարծ կանոյ առի. իմ դիմաց դանուււմ էր դարմանային մի առուակ որ ուռնացել, դիտակ էր դարձել 20 ոտք լայնութեամբ: Չուրք սրնթաց էր եւ աղմկոտ. փերտ-գառնայ չէր կարելի. ուստի շարուեսեկեցի ճամբաս, սրնթաց դետակի միջով. դիտակի առիկի խորանում էր. արդէն ձնկներիցս փեր էր զուրք. հոսանքը ուժեղ էր, հագիւ էի ընդդիմանում:

Ամբողջովին թրջուած, եւ հասայ դիւղ. ի՛ր ժամանակին: Ապա-

յակոյաջ արդէն մեկնում էր դէպի Կարս, քանի որ թուրքերի սուսաշարահները երեւացել էին մի քանի վերստի վրայ, իսկ նրանց յետեւից դալիս էր վլիաւոր մասը: Սկսուեց հրացանաձուլութիւն, բայց որոշուած էր այդտեղ կռուի չմտնել:

Հապուստներս արագ փոխելով, ես հրաժեշտ առի իմ պաշտօնակիցներից եւ դիպուպետ Մորէլից, մեկնեցի դէպի հարաւ, նոր պաշտօնատեղիս, երկաթուղապիտակ դէպի Կաղզուանի խճուղին: Բեկովի Սահէտից 6 վերստի վրայ ինձ հանդիպեց իմ նոր Չրդ դումարտակի համհարդ՝ սպայ Ահարոնեանը եւ շտապ պեկուցեց աքնտեղ ստեղծուած ախուր վիճակի մասին: Այնտեղ դանուող Սնուսի միակ դունդից մնացել էին միայն 137 մարդիկ, այսինքն պատերազմական շրջանի մի վաշտից էլ պակաս թուով:

Որպէս դի ուժեղացնեն այսպէս կոչուած «վաշտը», հրամանատարութիւնը տուած էր սպայ Ամիրխանեանի երկու հեծեայ հարիւր-Լակները, ընդամէնը 120 սուսերակիր:

Եւ այսպէս, ես ունէի 250 մարդիկ, շատ նուազ մարտունակութեամբ:

Վաշտը, պաշարուելով Գասլով գիւղի մօտ, կիթնի կռուով համբայ էր բացել եւ դուրս եկի Կարսի բարձրաւանդակը եւ այժմ գտնուում էր ոչ հետո Բերնա գիւղում, իսկ վայր, մտածում է, Եահանջի դէպի թիկունք:

Կաղզուանի ուղղութեամբ ոչ ոք չի մտածում, մարդիկ մեծապէս բարոյալքուել են Չարդից եւ այն պատեկողութիւնից որ աննարատակ է այլեւս կռուի:

ԿԱՐՍԻ ՏԱԿ

Բերնա գիւղը գտնուում է երկաթուղուց հարաւ-արեւմուտք, Կաղզուանի խճուղու վրայ: Գիւղը կառուցուած է բյուրի բանջին, ամֆիթատրոնի գիրքով: Ետճափի մէկ տան կռուրը միւսի բակն է:

Գիւղը կիսով ամայի է - ընտկիչները խելամտօրէն մեկնել են, թողնելով իրենց ստացուածքը:

Այստեղ կանգ առաւ մեր դումարտակը. ընդամէնը մօտ 250 մարդ, յոգնած, հիւժուած, Չարդիից բարոյալքուած եւ դէպի սպառանձան յոյս: Մարդիկ միայն մի բուն էին ցանկանում՝ որքան հնարաւոր է՝ շուտ տուն երթալ եւ ոչ մի դէպքում չկռուել: Որոշ չափով մարտունակ էին ենթասպայ Ամիրխանեանի երկու հեծեայ հարիւրեակները:

Նրանք ախպիկ հրոսակներ էին, կռուուած՝ Չարդերի մէջ: Գրանք պարտիզաններ էին՝ հիանալի նշանաճիւղներ եւ մենամարտիկներ. բայց կանոնաւոր զինուորական գործողութիւնների համար սխտանի չէին, ինչ որ ապացուցեցին հետագայ օրերին:

Ես ունէի մաւա նախկին ռուսական բանակի երկու-երեք սպաներ

որոնք պատերազմական ժամանակի արտադրութիւններ էին, սակայն լաւ կռուած կռիւական ճակատի վրայ: Այս արդէն լաւ էր:

Այսպէս, իմ դումարտակս ինքնին ներկայացնում էր Խնուսի դունդի մնացորդը: Նրա հրամանատարն էր մի լեհ կապիտան, հիսնայի սպայ, որ լաւ հոգ էր տանում իր մարտկանց փամփուշտ ու պարէն հայթայթելու գործին: Մենք զնդացիք եւս ունէինք:

Իմ ժամանումիս Երեկոյեան հաւաքեցի սպաներին եւ հաղորդեցի «Գումարտակնի վրայ գրուած պարտականութեան մասին»: Այդ պարտականութիւնը կայանում էր ճակատի ձախ թելը պաշտպանելու մէջ. դումարտակը պահեստի էր, նա պիտի խորաթափանց հետախուզութիւն կատարէր Կաղղուանի ուղղութեամբ:

Զորամասի սպայակոյտի վարիչ՝ սպայակոյտի պեր-զորավար Ջինկեւիչը, ինձ այդ հրահանգը տալիս, ձեռքերը թօթուեց՝ «Դուք պիտէք կացութիւնը, ինքնիշխ գիտէք թէ որքան դժուարին խնդիր ունէք, զօրավար Կաղարբէկեանը մինչեւ իսկ ուղում էր ձեզ հրահանգ տալ՝ յարձակուել եւ զրսւել Կաղղուանը: Դէ՛հ, այո, սեսէք, տեսէք թէ ինչ կ'անէք. արէ՛ք ինչ որ կարելի է»:

Ի հարկէ, իմ հրահանգը տալիս եւ սահմանափակուեցի պաշտօնական մատով, Թաղցնելով պապանի մասը որ ինձ տուել էր դեր-զորավար Ջինկեւիչը:

Սպաները ինձ լսում էին պատշաճօրէն, սակայն երբեմն արգահատական ժպիտ էր խաղում նրանց դէմքին: Մենք բալորս լաւ գիտէինք մեր միջակի անյուսութիւնը:

Եւ ե՛ւ դումարտակի վարիչն էի, ե՛ւ սպայակոյտի վարիչը, ե՛ւ համհարդ, ուստի այդպէս, ի հարկէ, չէի կարող աշխատել: Ինձ օգնական նշանակեցի ենթատայս Ահարոնեանին: Հրամանների տակ նա ստորագրում էր՝ «Ի տեղի սպայակոյտի վարիչի»: Այստեղ եւս դժուարութիւններ կային: Հասկացողութիւն չունենալով զօրոճմաների գեկավարութեան մասին, թէկուզ եւ ստորագրում էր «Ի տեղի», սակայն երեւակայում էր որ այդպիսին է, եւ, իր կարծիքով, սպայակոյտի վարիչը կարող էր ինչ հրաման որ ուզէր՝ տալ զօրամասերին, չհարցնելով ըսեն վարիչին... Այս բանը, ի հարկէ, ես արմատից կտրեցի. եւ նա շատ խիստ միջուկուեց:

Իմ հրճուանքս ու մեծ ուրախութիւնս էր այն փառքիկ, շարժական ռազիոկայանը որ փոխադրուած էր պրաստի վրայ եւ գործի էր դրուած ընդամէնը 20 բուլէի մէջ, նախկին ուսանողների ձեռքով, որոնք սքանչելի սպաներ էին: Ռազիոկայանը անխափան կերպով գործում էր:

Մեր դումարտակին սպասարկում էին Երեք անձնուէր լծիչներ

և երկու դժբախտանքներ, բայց և էլ անչափանդիր աշխատանքներ :

Հրեատանի ևս ունէի : Քաջակորով ենթասպայ Բազրատունին էր թնրանօթածիլը . թէև թնդանօթը նշանացոյց չունէր, սակայն կրակում էր յաճախ ևւ գզրգոցով . և, առանց կատակի, թէև թնդանօթը նշանացոյց չունէր, սակայն ինձ շատ ուտակար եղաւ : Նախ՝ նա բարձրացնում էր գուժարտակի սպին իր կրկնօթով ևւ գոցոցով, սպա՛ իր սուժրերով, արդէն դրա համար նշանացոյց պէտք չէր :

Իմ դալուս առաջին օրն իսկ սկսեցի ծանօթանալ : Մեր առջեւ, մօտ 10 վերստի վրայ, ձուլած էր մի բարձրաւանդակ որ կտրատուած էր «զերաններով» : Նա սմայի էր, իսկ յետոյ՝ կիրճն էր որ կտրուած էր դէպի Կաղզուան : Մի 25 վերստի վրայ արդէն երեւացին թրքական կանծուտը զօրամասերը որոնք պանդպօրէն առաջանում էին դէպի մեզ : Բայց նրանց մասին մենք ճշգրիտ ոչինչ չգիտէինք :

Ես ապիստով լուր առի, որ արդէն սկսել են թիկունքից ճակատ պալ նոր կաղձակերպուած ևւ լրացուած հայկական զօրամասեր՝ 1ին հետեւակ գունդը, 4րդ հետեւակ գունդը, 2էյթունեան ձիաւոր դունդը, Երզնկայի հետիոտն գունդը, փայլուն սպայ Հասան - Ջալալեանի հրամանատարութեան տակ :

Գործը մօտենում էր կոտի : Ուստի ևւ ես իմ հեծելազօրը՝ սպայ Ամիրխանեանի 2 հարիւրեակը ուղարկեցի դէպի Կաղզուան տանող խճուղին, թշնամու մասին տեղեկութիւնների ձեռք բերելու համար : Հետեւեալ արդիւնքը ստացանք՝ բնակչութիւնը կտտրուած են ևւ քրդական ուժեղ շտկաներ են : Երեկոյեան ինձ մօտ բերին երկու վիրաւոր, վախեցած թուրքերի և իսկ գիշերը՝ մի քանի թրքուհիների որոնք սարսափի մէջ էին, յուսուճատ, որոնց մենք թրքական գիւղ ուղարկեցինք ևւ կտպիտանի միջոցով, իսկ նրանց հարցաքննութիւնից իմացանք որ թուրքերը հրեատանիով շարժուած են Կաղզուանից Կարսի վրայ : Նրանք նախորդ օրը մօտեցել էին մեզ, պէտք էր լուրջ միջոցներ ձեռք առնել, հսկելու համար դէպի արեւմուտք հայող խճուղին :

Ես պահակներ ուղարկեցի դէպի հարաւ, իսկ զօրաւոր մի մաս էլ՝ թուրքերի գէժ . սակայն ես երբէք այլեւս չտեսայ նրանցից ո՛չ մէկին, նրանք շրջանցող ճամբաներով գնացել էին ուղղակի թիկունք, որի մասին ես յետոյ միտքի իմացայ :

Իսկ իմ ապիստ անընդհատ հետադիր - հրամաններ էր հազարդում զօրաւոր Նաղարբէկեանի սպայակոյտի պետից՝ ձկնմիջապէս սկսել յարձակումը, հայտանի ուձեմալով գրաւել Կաղզուանը, գործելով զնդապետ սլախնչի (անունը մոռացել եմ) հետ, որ առաջանում է իզգիթից :

Ես հասկանում էի, որ այդ բոլոր հրամանները սպայակոյտի պետը

արձակում էր Հայկական կառավարութեան համար, քանի որ սպայակոյտի պետ՝ զորավար Չինկելիչը լաւ գիտէր կացութիւնը եւ իմ «անդորութիւնը»՝ նման դումարտակով ճեղքել — հասնել Կաղզուան։ Յատկապէս անհեթեթ դարձաւ այդպիսի հրամանը, երբ յայտնի դարձաւ որ Պօսլին գիւղը գրաւուած է թուրք հեծելազօրի կողմից, երկու լեռնային թնդանոթներով եւ գնդացիներով։

Ապրիլ 25 լոյս 26ի գիշերը, երբ մեր Ց հոգի պահակները մօտենում են յունական Ղարաքիլիստ կոչուած գիւղակին որ ընդամէնը 2 վերստի վրայ էր Բերնայից, հանդիպում են յոյների համազարկին։ Համազարկը կարճ տարածութեան վրայից էր։ Մեր Ց հոգին էլ սպանւում կամ վիրաւորւում են։ Վիրաւորներին փրցնում են յոյները։

Բանից երեւաց որ տեղական յոյները որոշել էին անցնել թուրքերի կողմը, որոնք արդէն մէկ քանի վերստ հեռաւորութեան վրայ էին։

Այդ գիշեր մեզ մօտ հասաւ Հայկական Արդ հետեւակ գունդը, լեռնային մարտկոցով։ Գնդի հրամանատարը համաձայնեց ինձ հետ որ սկէտք է դաս տալ Ղարաքիլիսի յոյներին, իրենց դաւաճանութեան համար։ Բայց նախ՝ նրանց մօտ ուղարկեցինք բանակցողներ ճերմակ գրօշակով։ Գիւղից կրակ բաց արին բանակցողներին վրայ։

Այդ ժամանակ մենք կանչեցինք լեռնային մարտկոցը որ կրակ բաց արաւ յոյների վրայ։ Յոյները շէին սպասում որ մեզ հրետանի էր հասել։

Բոլորը փախան, երբ սումբերն բնկան գիւղի վրայ եւ աւերեցին տները։

Յոյները փախան թուրքերի մօտ։

Երբ մեզ մօտ եկաւ Հայկական Արդ հետեւակ գունդը, ասաւ եւ նպաստաւոր դիրքի մէջ եղայ ուժեղ հետախուզութիւն կատարելու, քանի որ գոճեզը կապում էր բոլոր Հայկական զօրքերի ձախ թիւք, իսկ Չրդ վաշտը դարձաւ «թիւի յետեի շարժւել պահեւորներ»։

Արդ հայկական գունդը, որքան յիշում եմ, գտնւում էր Գնդապետ Միրիմանովի հրամանի տակ, որ գրուեց այն փոքրիկ լեռնաշղթան որ ուղղահայեաց կերպով ձգւում էր դէպի Կաղզուանի խճուղին, Բերնա գիւղից հարաւ։ Բացի գրոնից, անպայման պահանջ կար ուժեղ հետախուզութեան դէպի արեւմուտք եւ հարաւարեւմուտք, թուրքերի կողմը, որոնք արդէն մեզ շատ մօտ էին գտնուում։

Վերցնելով սպայ Ամիրխանեանի երկու հարիւրեակը, եւ որոշեցի հետախուզութիւնը անձամբ կատարել, Պասլինի կիրճի ուղղութեամբ։ Օրը պայծառ էր. սպող։ Անցանք Ղարաքիլիսի յոյն գիւղով։ Այրուած տներ, տնային կահկարասիները, գորգերը եւ ամանեղէնները ջրուած ... Ե՛ւ ոչ ոք կայ գիւղում։

Գիւղի Տուարի մօտ ընկած են երկկուայ մեր զոհերի դիակները . մեր տղաները վերցնում են դիակները : Ի՛նչ անասուններ էին այդ յօյները , դանակներով խօցուած էին մեր պահակների մարմինը , զոհերի դէմքերը թէև ալլանդակուել էին տանջանքներից , բայց մենք կարողացանք յօյների սղանած մեր պահակներին ճանաչել :

Յոյները սխալ հաշիւ էին արել , թէ ո՛ր կողմը պիտի հակուէին :

Եսևտով Ելանք խճուղու վրայ : Ես եւ Ամիրխանեանը մի քիչ աւելի առաջ էինք ձիտվարում . յանկարծ խճուղիից հարաւ , 150 քայլի վրայ , թումբերի յետեւից բարձրացան մի խումբ մարդիկ . . . Ապա ուրիշները . . . դարձեալ նորերը . . . մի ամբողջ շղթայ , ընդմիջումներով : Բոլորը դիմուորական հազուատով են . մի քանի տասնեակ մարդիկ : Նրանք ուղղակի գէպի մեղ եկան , անկանոն կերպով կրակելով :

Մէկ բուպէ՛ իմ հարիւրեակները , շարքով , սլացած գէպի յարձակուողները : Ես դնում էի յարձակուողների աջ թևւի վրայ : մի բուպէ եւս՝ նրանց շղթան ցնցուեց սւ փախաւ , գէնքերը նետելով :

Սկսուեց , այս անգամ , ջարդը անդէնների :

Ես ոչինչ չէի կարող անել , դադարած հրոսակները մառ-գէրններով հնձում էին փախչողներին :

Ձիերը խուռում էին ցեխերի մէջ , մարդիկ մէկ կողմից միւսն էին նետում , բայց արդիւնքը միեւնոյնն էր :

Դաշաբ ծածկուեց տասնեակ դիակներով :

Հարցաբնութեան համար ես պէտք ունեմ գերիների :

Բայց ո՞վ :

Մէկ թուրք գերու կանչեցի իմ տապանդակիս մօտ . գեղեցիկ էր , բարձրահասակ : Բայց , քշելով իր ձին , սարախզաններից մէկը վրայ հասաւ . եւ իմ ոտների տակ նրան սպանեց մառ-գէրով :

Եւ այսպէս , մի քանի բուպէից՝ դաշտի վրայ միայն դիակներ կային :

Ես լուռ , ցնցուած այդ տեսարանից , խճուղիով շարունակեցի ճամբաս : Իմ յետեւից դայիս էին մարդիկ , արիւնից դրդուած , ամէն մէկի ձեռքին 2 կամ 3 հրացան , ազանուածներից :

Ամիրխանեանի դէմքը փայլում էր . «Պարոն դնդապետ , մենք ոչնչացրինք աւելի քան 50 թուրքեր եւ քրդեր : Միայն 20ը թուրքեր էին , մնացորդը՝ քրդեր , «կամաւորներ» հարեւան գիւղերից : Նրանք ուս գիմուորական հազուատներով էին : Իմ մարդիկս գեռ այնտեղ են , հա՛ , հա՛ : Պատերազմական աւա՛ր . հա՛ , հա՛» :

Մասը դնում էի , ուղղուելով գէպի կիրճը տանող վայրէջքը , ուր կը կարծէինք թէ թուրքեր կան :

Հասունք խճուղիին , գէպի կիրճը վայրէջքին : Ամէն ինչ լուռ է : Երկար սպասեցինք , զննեցինք : Խճուղու աջ եւ ձախ կողմերը մի քանի

ժարդիկ նշանակելով եւ յետեւում 20 ժարդ թողնելով, առաջ ուղարկեցի պահակներին, եւ մենք էլ սկսեցինք ուղարկատեսակներով վար իջնել:

Յանկարծ դիմացից կրակոցներ լսուեցին, մեր գլխատուր պահակախումբը յետ վազեց, փախախները շարժելով: Միաժամանակ, մեզ համար անտեսանելի թշնամին ժայռերի յետեւից կրակ բաց արաւ մեր վրայ, բառացիօրէն ամէն կողմից: Կրակոցներ էին լսուած նաև վերեւում, ուր դտնուած էին մեր թեւերը պաշտպանողները:

Շտապ, մեր ձիերը թափցրինք ժայռերի եւ դարափուլերի յետև: Պէտք էր յետ ևրթաւ դէպի վեր, կիրճի շուրթը, բայց թուրքերն ու քրդերը բռնել էին խճուղիի ելքը եւ բարձրաւանդակը: Մենք երկու վիրաւոր հրոսակ ունէինք եւ ևրկու ձի: Նոր աղէտ եւս. Սմիթիանեանը վաղուած է դէպի ինձ եւ ասում՝ «փամփուշտները շատ քիչ են, պէտք է ինչայնք...»

Մի ձիաւոր ուղարկեցի, քրդի հաղուստով, դէպի վեր, ուր թողել էինք ժարդկանց եւ ձիերին:

Հրացանաձողութիւնը սաստկացաւ: Մենք շատ քիչ ենք պատասխանում:

Այսպէս անցաւ ևրկու ժամ:

Երբ մայր մտնող արևը ոսկեպօծեց լեռների կատարները, յանկարծ վերը, կիրճի շուրթին, ևրեւացին ևրկու ձիաւորներ ևրկու ուրիշ ձիու ստնձները բռնած:

Իրանք՝ դոկտոր վարդանը եւ պթութեան քոյր Ս. Մ. Սիկորսկայան էին, որոնք թշնամու կրակի տակ քառատրոփ ձիավարելով, մեզ համար բերել էին ևրկու բնօ փամփուշտներ:

Ուժեղ կրակ բաց արինք եւ կամաց-կամաց կիրճից դէպի խճուղին հասանք, ևրկու վիրաւորները մեզ հետ:

Նահանջում ենք դէպի Բերնա:

Փա՛ռք քոյր Սիկորսկայային եւ դոկտոր վարդանին:

Իմ դուրս սողոսկելը վտանդից, հայ բնակչութեան մէջ բարձրացրեց իմ հռչակը եւ ինձ մօտ սկսեցին պալ հայ-կամաւորներ՝ ձիաւոր, գէնքով, անդէն ժարդիկ:

Խնուսի դունդը սկսեց աճել... Բայց մասնաւորապէս իմ խումբս մեծացաւ, երբ ես հայրէն լեզուով կոչ գրեցի, մօտաւորապէս հետեւեալ բովանդակութեամբ.

«Թուրքերը, օգտուելով Բուսահայտաւանի վերիվայրումներից, գրաւեցին ուրանների կողմից գրաւած հայկական հողերը:

Հարիւր հազարաւոր հայեր մահ գտան բուրքերի ձեռքից:

Փրկուածները, Ատանով ամէն ինչ, անցան ուրսական սահմանը,

այստեղ փնտռելով պաշտպանութիւն եւ սնունդ :

Եթէ այժմ էլ հայ ժողովուրդը ստի չկանգնի զեմքն ձեռիմ ի պաշտպանութիւն իր հայրենիքի, ապա իր նահապետները կը լինին նոյնը ինչ որ հրեայ ժողովրդինն է : Նա ցրուած է ամբողջ աշխարհում բոլորին օտար, բոլորին թշնամի :

Այսպէս, ուրեմն հաւաքուեցե՛ք հմուտի գնդի մէջ, Բերնա գիւղը, Ձէն Ի ՁՆՏԻՆ : Կապիտան Շնեուր :

Մի քանի օրուայ մէջ ինձ մօտ եկան 1300 մարդիկ : Բայց, Ատտուա՛ծ իմ, դա իսկապէս հարկչական ընտանի էր : Գլխաւորը այն էր (ինչ որ սարսափելի էր), որ շատերը եկած էին առանց զէնքի, չնայած որ կոչիւ մէջ յիշուած էր՝ «զէն ի ձեռիմ» : Եւ սակայն, մի կերպ կարգադրեցինք, այսպէս կամ այնպէս բոլորին զինեցինք մտիններով :

Այդ միջոցին, թուրքերը հաստատօրէն դրաւեցին Կաղզուանի կիրճը եւ սկսեցին տակաւ տա տակաւ դրաւել Կարսի դարձրաւանդակը : Նրանց մանր յառաջադասները մեզ բոլորովին մօտեցել էին :

Ինչպէս որ ասել եմ, թիկունքից եկան հայկական նոր կազմուած դօրամասեր՝ երկու հետիոտն դնդեր, լինելու 4րդ, ընդհանուր հրամանատարութեան տակ զնդապետ Բէյ մամիկոնեանի, եւ զդրաւեցին Բերնայից արեւմուտք փոքր լեռնաշղթաները (ինչպէս որ կը տեսնէք յատակագծի մէջ) : Իմ դօրքը, իբրեւ ընդհանուր պահեստի, մնաց Բերնայում :

Օգտուելով կարճատեւ դադարից, սկսեցի կաճաւորներին կարգի բերել : Շուտով իմ ձիաւոր 2 հարիւրեակի դարձու 3, իսկ Խնուտի դունդը՝ մինչեւ 8 վաշտ, ամէն վաշտի մէջ՝ 120 մարդ : Կարգադրեցի նաև պարհիւսաւորման հարցը, ալիւրով եւ զետնախնձորով : Աւա՛ղ, այս էր բոլորը որ կարող էի անել :

Շուտով եկան Մուրադի եւ Սեպուհի Կրկու հարիւրեակները, բայց 2-3 օր մնալուց յետոյ մեկնեցին Իրօի մօտ, Կարսի պաշտպանութեան կենտրոնական հատուածը :

Համաձայն Կերենսիի ժամանակաւոր կառավարութեան կարգադրութեան՝ սպաներին վարձատրել զինուորական աչքառու դօրձունէութեան շքանշանով, Մուրադի եւ Սեպուհի հարիւրեակները որոշուած կայացրին Գէորգեան շքանշան տալ 4 սպաների՝ դօրավար Մ. Չինկովիչին, սպայակոյտի զնդապետ Մորէլին, զնդապետ Կաֆիելին եւ ինձ : Որքան դիտեմ, վարձատրութեանը ոչ մէկը չկրեց իր ստացած շքանշանը :

Շուտով թուրքերը դարձան աւելի դօրձօն եւ սկսեցին ճնշել Նովոսելիմի պաշտպանութեան հատուածը :

Ապրիլ Ծին եւ Յին Բերնայի մօտի լեռան վրայից պարզ երևում էր Թէ ինչպէս կրակում էին ճակատի կենտրոնական մասում :

Բերնային մօտեցաւ գնդապետ Կորդանովի (Կորգանեան) գնդի Հեծելազօրը :

Ապրիլ 7ի արշալույսին եւ կանչուեցի Հեռախօսի մօտ : Թօսողը Կարսի ամբուժիչներէրի շրջանի շտաբի վարիչ՝ սպայակոյտի գնդապետ Սկրեարովիչն էր : Բանից երևաց, որ գիշերը Թուրքերը յարձակուել էին Բէյ Մամիկոնեանի (գնդապետ Մօրէյի Նին գունդի) յառաջապահներէ վրայ, զարկել է. որաւել էին Չ գնդացիք : Ինձ ցուցմունք տուին դրուժիւնը վերականգնել : Դա շատ վտանգաւոր էր, քանի որ դա Կարսի սրաշաղկապութեան ձախ թեւն էր :

Այսպէս, ուրեմն, ինձ առաջարկեցին առաջ շարժուել Հայկական Նին եւ 4րդ Հետիոտն գունդերի՝ ձախ թելի յետեւից եւ յարձակուել Թուրքերի թելի եւ թիկունքի վրայ :

Հաւաքեցի իմ հեծելալ հարիւրեակները եւ ստուգտեան մամը Ծի մօտ շարժուեցի ճակատի յետեւից, որ գրաւուած էր Հետիոտն դամարտակի կողմից, Ալա Դաւա լեռան երկու բլուրների անցքից : Ես ընդամէնը ունէի 300 սուլճաւորներ եւ նոյնքան սուսերակիրներ : Ես իմ շտաբիս հետ գնում էի գօրասիւնի առջևից :

- Կապիտան, բարեհաճեցէք չդանդաղել, - ասաց Բէյ Մամիկոնեանը ինձ, ինչպէս միշտ, անքաղաքաւար ու կտպիտ :

- Կապիտան, բարեհաճեցէք չդանդաղել, դարձաւ նա ինձ աւելի բարձր ձայնով :

Ես պատասխանեցի որ կատարում եմ գինուորական հրահանուը որ ստացած եմ Կարսի խումբի շտաբի վարիչից, որին եւ անմիջապէս ենթակայ եմ եւ կը կատարեմ հրահանուը ախպէս եւ այն ժամանակ, ինչպէս որ ինձ հրամայուած է :

- Ի՞նչ էք ենթադրում անել, - ասաց նա մի քիչ աւելի պարկեշտ եղանակով :


- Ես ուզում եմ յարձակուել Թուրքերի վրայ եւ վերականգնել դրուժիւնը, - ասացի ես :

- Ի՞նչ, ուրեմն ժամանակ մի՛ կորցնէք, - նորին գոտաց նա :

Ես այլևս չլսեցի նրան եւ շարունակեցի իմ ճամբան :

Շուտով ես անցայ Ալա Դաւա լեռան քարքարոտ անցքը եւ իջայ Հովիտը, ուր Նին գունդը կրակում էր մեր կտելը մէացած բլուրի լանջերից : Արդէն ստուգտեան ժամը 7:30 էր : Ծակաւոր բառացիօրէն ճարճատում էր հրացանների եւ գնդացիների կրակոցներից : Երբեմն որոտում էր նաեւ Հայկական լեռնային հրետանին :

Թուրքական ՅՅրդ: հետեւակ զորաբաժինը ամբողջն պրակել էր
 Կադի Կաշա փոքր լեռնաշղթան, այնտեղից փտարելով հայերի առաջա-
 ծասերը եւ գրակելով 2 գնդացիքներ: Երկու բլուրների լեռնանցքից
 լու տեսնոււմ էր պաշտպանութեան ամբողջ ճակատը: Մտենալից տաք
 կռիւ էր, հրացանների եւ գնդացիքների ճարձատիւն, լայն հրետանին
 թէ՛ էր կրակում: Ըստ երեւոյթին թէ՛ հայերը եւ թէ՛ թուրքերը թ.
 թնդանօթներ ունէին:



Օրը սպաժժառ էր, բայց կազի կայաւ եւ Ազա Իսախ լիռնակատար-
ներին ամպերն էին սրտել:

Արագ հովիտ իջնելով, եւ իմ Յ հարիւրեակը բաժանեցի աշապէս
(տես յատակապիծը). առաջին հարիւրեակը, հրամանատարութեամբ
սպա, Չաքարեանի, հրամայեցի շտապով յարձակուել կազի կայայի
վրայ գտնուող թուրքերի աջ թևի վրայ:

Ինքս, իմ Չրդ հարիւրեակով եւ վինուորական պաշտօնեայ Ածիր-
խանեանի հետ (իբրեւ կրտսեր սպայի որ իր դերը սքանչելիօրէն կա-
տարում էր) վճռեցի յարձակուել թուրքերի նոյն թևի վրայ, մի քիչ
չջնանցելով նրա թիկունքը:

Յրդ հարիւրեակը, մի քիչ ոտ բռնելով 500 քայլի վրայ, յարձակ-
ուելու էր թուրքերի սահանախների վրայ:

Աշապիսով, գլխաւոր հարուածը եւ վերցնում էի իմ հարիւրեակի
վրայ, հեծեալ շորքով, իսկ այդ ժամանակ շտապող հարիւրեակը, իր
վրայ հրաւիրելով թուրքերի ուշադրութիւնը եւ կրակը, պիտի մօտե-
նար հակառակ, իսկ երբորդը պիտի յայտնուէր թիկունքում:

Ժամը Յի մօտ բոլոր երեք հարիւրեակները սկսեցին գործադրել
իմ դժած ծրագիրը: Չաքարեանը, շտապեցնելով իր հարիւրեակը,
սկսեց դանդաղօրէն յարձակուել կազի կայայի վրայ:

Եռտով, սակայն, թուրքերը նկատեցին եւ հրացանի կրակ քա-
ցին, բայց նրանց գլխաւոր ուշադրութիւնը գրաւուած էր զնդապետ
Մերիմանովի լին գունդով եւ նրա կրակով:

Երբեմն ճարճատում էին զնդացիրները:

Ես իմ հարիւրեակը ցրեցի փոսերի մէջ եւ սկսեցի մօտենալ թուր-
քերին. սակայն իմ շարժումս շխուտափեց թուրքերի հայեացքից եւ
երկու զնդացիրներ սկսեցին կրակել մեր վրայ, երբ մենք երեւում
էինք, ցատկելով դար ու փոսերով:

Չաքարեանի յարձակումը սեղմուեց, երբ նրա վաշտի շղթան
թուրքերից 500 քայլի վրայ հասաւ: Եղթաները ստուկեցին եւ ուժեղ
կրակ բացին: Գնդացիրները ճարճատում էին երկու կողմից:

Մի քիչ էլ՝ մենք գուրս եկանք բաց տեղ: Գետք էր վաղել-կտրել
500 ոտք տարածութիւն, մինչեւ որ կազի կայա լեռան փէշերը եւ
ժայռերը կը սլաշտպանէին մեզ:

Թուրքերը կրակը կենտրոնացրին մեր վրայ, մի մի ընկաւ. մենք
հարթութիւնը կտրեցինք սազմակառն քառատրոփով: Մարդիկ սկսեցին
ետ մնալ: Ես գտուացի որ ոգեշնչեմ՝ «ԹՈՒՐԳԵՐԸ ՓԱԽՉՈՒՄ ԵՆ»:
Եւ երկու-երեք բազէ՝ մենք արդէն հասանք թեք վերելքին որ մեզ
ծածկեց թշնամու աչքից: Մազլցիելով ժայռերի կոյտերը, շուտով ես

հասայ վեր եւ՝ կարկամեցի. Թուրքերը 30 քայլի վրայ էին մեզնից... նրանց գնդացիքը, շուրջը վեց սակեարներ, կրակում էր Չաքարեանի հարիւրեակի վրայ: Իսկ քիչ հետոն, Թուրք վաշտի դերքը կրակի տակն էր դնդապետ Մեքիմանովի լին գնդի:

Ետըջն նայեցի. իմ մօտս էր իմ սիրելի պաշտօնեայ Ամիրխանեանը եւ հարիւրեակից 11 անձեր:

Մեզ տեսնելով, Թուրք խումբը վեր ցատկեց ու փախաւ իր վաշտի մօտ: Երկու գնդացիքները մնացին մեր ձեռքը, իրենց փամփուշտի ժապաւէններով:

Իրիք բռնած Թուրքերը սկսեցին նահանջել անկարդ կերպով, սակայն կրակելով մեր վրայ: Այդ պահուն ինձ մօտ հասան մեր զինուորները եւ քարերի ետեւից սկսեցին կրակել թշնամու վրայ:

Որպէս զի աւելի յարմար կիրպով կարգադրութիւններ անէի, ես նստած էի մնացել ձիուս վրայ, իսկ ինձ մօտ էր նաեւ Ամիրխանեանը: Ետնկարծ նրա ձին տապալուեց գետին եւ անմիջապէս սատկեց. գնդակ էր դիպել:

Ես ինձ տրուած հրահանգը կատարել էի. յարձակուել կանոնաւոր նահանջող Թուրք շղթայի վրայ, անխոհեմութիւն կը լինէր: Իսկ վեր էր իմ ունեցած փոքրաթիւ զինուորների ոյժից:

Այդ պահուն, մեր լեռնային մարտկոցը մեզ դնելով Թուրքերի տեղ, կրակի րաց արաւ մեր գէժ, քայց մի 20 ուսմբ արձակելուց յետոյ լռեց: Ըստ երեւոյթին թնդանօթաձիգները հասկացան իրենց սխալը. իմ զինուորներս թաղանկցին քարերի ետեւ:

Վերաւոր չունեցայ:

Թուրքերի շղթան սկսեց կորուստներ ունենալ մեր կրակից, եւ իրենց թիկունքում յայտնուեց մեր Յրդ. հարիւրեակը եւ իմ Չաքարեանս երեւաց իր հարիւրեակի հետ կազի կայա լեռան վրայ: Թուրքերի նահանջող շղթան սկսեց յուզուել, նրա մէջ նկատուեց անկարգութիւն, մի քանի սակեարներ սկսեցին փախչել: Հայերը սկսեցին գերիներ բռնել, սակայն դերի չէին պահում... Միայն մէկին յաջողեցի պահել, հարցաքննութեան համար, խոստանալով փրկանք:

Երբեմն թրքական շղթան պատկում էր. դա կարդապահ զօրախումբ էր եւ իր կրակը հանդարտ էր: Նրա թեպին երկու զինուորներ տանում էին ինչ որ փայլուն առարկայ: Թւում էր դա գնդացիք էր: Ես որոշեցի գրաւել այն, քայց շղթան թոյլ չէր տալիս: Այդ ժամանակ մեր կրակը կենտրոնացրինք «գնդացիք» տանող սակեարների վրայ. նրանցից մէկը ընկաւ, իսկ միւսը փախաւ:

Իայց ի՞նչպէս վերցնել գնդացիքը, թրքական շղթան նրա մօտ էր պառկած:

Ձիճուորնեքիս խոստացայ ճիսաչ» ևւ դրամ :

Մի քանի անգամ փորձեցին վրայ վաղելի . կորցրին երկու ձի . վերջապէս մօտ վաղեցին ևւ բերին :

Բանից կրեւայ դա եկեղեցու պղնձէ դմբէթ էր , որի մէջ թուրքերը իրենց կերակուրն էին եփում . . .

Թուրքերը աւելի ու աւելի նահանջում էին դէպի իրենց պահեստիները : Երեկոյեան դէմ էր : Իմ խնդիրս լուծել էի , առդիոյով հեռադիր ուղարկեցի զօրարածնի հրամանատարին :

Երբուքիւնը վերականգնուած է . բուրբերը ջախջախուել եւ նահանջում են : Գնդացիները վերագրանցի եւ վերադարձրի իմ զունդին : Շնեար» :

Թուրքերը շարունակում էին նահանջիւ . նրանց վրայ գրոհում էր զնդապետ կորդանովի ին հեծեալ գունդը , . բայց հասաւ զնդացիներին , ապա հեռացաւ :

Գիշերն իջաւ : Ես բռնեցի խճուղիի շրջանի փոքր լեռնաշղթան : Անձրեւում էր : Կաթիլներն ընկնում էին լճակների մէջ : Մարդիկ ևւ ձիերը յողնած էին , արդէն առաւօտից ոչինչ չէին կերել , վհատ էին : Հրացանաձուլութիւն . զնդակներն ընկնում են անձրեւից դոյացած լճակների մէջ : Խոհանոցը բերին , նոյն իսկ՝ գինի , մի կում զինի կոնծեցինք , կերանք եւ տրամադրութիւններս բարձրացաւ : Յանկարծ շղթայից մի ձայն դուռեց՝

- Իսկ ի՞նչ կը լինի , պարոն կապիտան , սուինամարտով գրոհենք թուրքերի վրայ ևւ ուղարկենք նրանց սատանայի գիւղը :

Ես խնդացի . այդքան :

Գիշերը մեզ մօտեցաւ զնդապետ Եֆրեմովի ոռւս սպայական գումարտակը , իսկ ես հրաման ստացայ սնդնել պահեստի մէջ , Բերնա գիւղը : Մեկնեցի , փաթաթում իմ կիսամուշտակիս մէջ , որ ուղարկուած էր կայանից : Կիսամուշտակս ուսադիրներ շունէր : Ծամփին ինձ մօտեցաւ մի ոմն սպայ ևւ «համոզկեր ձեւով» խնդրեց վկայական տալ այն մասին որ ինքն էր առաւօտեան գրուել զնդացիները : Ես միայն գլուխս թօթուեցի , նրա փոխարէն ամօթ զգալով :

- Տեղեկանք տուէք , - ասելով , շարունակեցի ճամփաս :

Բերնայից ոչ հեռու , խճուղիի վրայ մի հիւլակ կար . այնտեղ նստել էին լեռնային հրետանիի սպաները , կրակի շուրջ : Նրանք հրաւիրեցին ինձ տաքանալ եւ մի բաժակ գինի խմել : Ես չմերժեցի : Ես նրանց առաջին անգամն էի տեսնում , նրանք եւս ինձ երբէք չէին տեսել : Նրանցից մէկը , ըստ երեւոյթին հրետանիի հրամանատարը , ինչ որ բան էր սրամուռ շուրջը նստողներին :

- Չախողեցի այսօր, - ասաց նա :

- Իսկ ի՞նչ բանի մէջ, - հարցրեց ներկաներից մէկը :

- Դէ . . . Կաղզուանի ջրկատի հրամանատարը կայ, կարծեմ, ընդհ. սպայակոյտի մի կապիտանն՝ գերմանական սղզանուսով որ չեմ յիշում. նա որ այսօր առաւօտեան յարձակուեց թուրքերի վրայ եւ գրաւեց նրանց երկու գնդացիքները, հէնց այնտեղ էլ զուրս եկաւ թրքական զէրքերի թիկունքը. ես նրան է որ գրի թուրք հեծեալի տեղ եւ նրա վրայ թնդանօթ կրակեցի, երեք հերթով :

- Դէ, այժմ, ի հարկէ, նա ղեկոյց կը տայ. դիտէ՛ք ընդհանուր սպայակոյտը. հիմա աղէտից չես խուսափի. դէ նա մեր շարքային եզրայրը չէ :

Ես ծիծաղեցի : Չէ՞ որ իմ կիսամուշտակս առանց ուսադիրների էր. զժուար էր նրանց համար դուշակել որ իրենց հետ նստած է հէնց այն մարդը սրին սխալմամբ ոմրակոծել էին :

Ես հանդուսացրի հրետանիի հրամանատարին, ներկայացրի ինձ սպաներին եւ աւելացրի որ մէկ երկու հարազատ ուսմբը զործըն չի աւրի :

Նոյն ժամանակ անձրեւը ստատկացաւ : Ենորհակալութիւն յարմնելով թնդանօթաձիգներին իրենց սիրալիր ընդունելութեան, մի բաժակ գինու, տաք խորոյլի համար, ես մեկնեցի զիշերելու : Այնտեղ եկաւ իմ ջրկատար ևս : Օրուայ մտրտերից յետոյ յոչնած մարդիկ տեղաւորուեցին տաք, չոր հիւղտիկների մէջ եւ խորը քուն մտան :

Հիւանդանոցում մի քանի վիրաւորներ կային որոնց վէրքերը խնամքով կապել էին մեր սիրելի բօլիշկներն ու զթուրթեան քոյրերը. վիրաւորները քնել էին, որպէս զի յաջորդ առաւօտեան ուղարկուէին թիկունք, իրենց ընտանիքների մօտ հանդստանալու համար :

Ատուա՛ծ իմ, ե՞րբ կը վերջանայ այս քսլորը :

ԿԱՐՍԻՑ ԼԵՌԱՆԱԼԸ

Առաւօտեան, հազիւ արիւածադին, համաձայն զօրաբաժնի սպայակոյտի հրամանին, իմ ջրկատու ձուռեց Բէգլի Ահմէդ կայարանի ուղղութեամբ : Գնում էի ես իմ զօրասիւնի ետեւից, իմ զօրասիւնս երկար չէր՝ ութը վաշտեր, երեք հեծեալ հարիւրհազակներ, ռազիոյ-կայան, իսկ հետեւից, ի հարկէ, մէկ վերատից աւելի երկայնութեամբ սպաշարակիր սայլերը՝ բուժակային, մասեր, պարէն եւ այլն . . . Իսկ նրանց յետեւից հասնում էին յետ մնացած սայլերը :

Երբ մօտեցանք Կարս-չայ կամուրջին, տեսայ մի խումբ ձիաւորներ գնդապետ Մամիկոնեանի վիրաւորութեամբ : Ես ձիս քշեցի նրա մօտ, որպէս զի ծանօթացնէի նրան սպայակոյտից ստացած

կարգադրութիւններին :

Մակայն ճեր խօսակցութիւնը անսպասելի բնոյթ ստացաւ, իր ձայնը բարձրացնելով, այդ տիպը հազիւ թէ չդուռաց .

— Ես՝ ձեզ ձերբակոչում եմ, կատիտան : Ձեր մարդիկ բարոյալքում են քոյրը զօրամասերը, — եւ նա մատնացոյց արաւ դաղթականնեքի բազմութիւնը, սրոնք խօսուել էին ճեր զօրասիւնի յետեւի շարքերին :

Ես նորէն դապեցի ինձ .— Դրանք իմ մարդիկս չեն, գնդապետ, — ապա խնդրեցի նրան փոխել իր խօսելու կղանակը :

Վրդովուած, քուսածբակ հասայ իմ զօրատիւնիս : Յիշելով երէկուայ օրը, ես աւելի յուզուեցի : Ձե՞ որ ես փրկեցի Քէյ Մամիկոնեանին, յարձակուելով նրան հարուածած թուրքերի վրայ, կապի կայաչում : Ես նրան վերագարձրի երկու գնդացիները, իսկ նա այդ ժամանակ թիկունքում թափառում էր եւ հրամաններ արձակում Խնուսի իմ դունդին, նման ոչ մի իրաւունք չունենալով քանի որ ես ընդհանուր սրահատի լինելով կնթակայ էի ուղղակի զօրամասի սպայակոյտին :

Այս իմ յուզումի վրայ տւելացաւ նաև Չերմուտենույի (մալաբիա) իմ տաղնապը : Մարտափեյի կերպով բարձրացաւ տաքութիւնս, խիստ թուլութիւն եկաւ վրաս, աչքերիս մշուշ իջաւ :

Հասնելով գոնդի հրամանատարին (անուէնը, եթէ չեմ սխալում, կտպիտան Խմեալինսկի), նրան սասցի որ հիւանդ եմ, որ մեկնում եմ Ալէքսանդրապոլ պատկելու, քինին ընդունելու, եւ զօրաբաժնի սպայակոյտին գեկուցելու. քոյրի մասին, ի միջի այլոց նաև Քէյ Մամիկոնեանի անարդ վերաբերմունքի մասին : Սպա անմիջապէս ռադիոգրամ ուղղեցի սպայակոյտին . «Հիւանդացայ, պարտականութիւնս յանձնեցի կտպիտան Խմեալինսկուն : Մեկնում եմ գէպի զօրաբաժնի շտաբը : Կատիտան Շնէուր» :

Որոշում կայացրի, որ իմ հրամանատարին տալիք գեկուցումիցս յետոյ եթէ ընթացք չտան իմ գործիս եւ մի տպտակ՝ Մամիկոնեանին, հեռանամ Հայկական բանակից եւ վերագտնում կամաւորական բանակը, որի անգամն էի, իսկ Հայկական բանակ էի՝ եկել ես միայն առաքելութեամբ, զօրավար Բարաթովի իրաւասութեան շրջանը, ուստի նրան գեկոյց գրեցի անմիջապէս եւ խնդրեցի ցուցմունքներ :

Բէգլի Ահմէդ կայարանում մօտ կէս ժամ հանդատանալուց յետոյ, սարսափելի վիճակի մէջ, հազիւ կարողանալով ինձ պահել ձիուս թամբի վրայ, ես դնացի գէպի Կարս, ուր եւ հասայ ցերեկուայ ժամը ջին : Չերմուտենդիս տաղնապը այնքան խիստ էր, որ ինձ թւում էր թէ

հէնց այս է՝ վայր կ'ընկնեմ : Արոշեցի այդտեղ դիշերել :

Իմ համհարզս դնաց ինձ համար տուն փնտաելու , իսկ ևս մեր ձիերի սանձերն էի բռնել : Բայց այդ պահուն ինչ որ տարօինակ բան պատահեց : Այնտեղ , փողոցի խորքում , յանկարծ գովիւններ լսուեցին : Հրետանի էր վազում . քաղները մտրակներով ձաղկում էին ձիերին . դժբախտ սպասաւորը հաղիւ իրեն պահում էր հրետանիի եւ ռումբերի արկղների արանքում , իսկ շորս կողմը փախչում էին մարդիկ սարսափելի խուճապի մէջ :

Աշխատեցի իմանալ բանն ինչո՞ւմն է .— Թուրքերը ներխուժեցին , գոռաց մի ոմն նեթասպայ , շտապեցնելով իր սուրացող մարտկոցը : Ահազանդը , բանից երեւաց , սուտ էր :

Իմ համհարզս սրտեղից որ է ձեռք էր բերել կէս շիշ Շուստովի կոնեակ . ևս մի քանի կում խմեցի եւ մի քիչ ոյժերս վերադարձան :

Երկաթուղու կայարանում կանգնած էր գնացքը , մեկնելու պատրաստ : Ենորհակալ լինելով համհարզիս , արձակեցի նրան ևս կարողացայ բարձրանալ վաղոնի հարթակի վրայ : Շուստով գնացքը շարժուեց ևս ևս մեկնեցի Ալէքսանդրապոլ :

Մթնում էր :

Ալէքսանդրապոլում , գորարածնի շտաբում ինձ հիանալի ընդունելութիւն ցոյց տուին : Զորավար Նազարբէկովը լսելով իմ զեկոյցը , շնորհակալութիւն յայտնեց ինձ կողի Կայայի վրայ յարձակումիս ևս գրաւածս երկու զնգացիւրների համար :

Նա ինձ ասաց , որ Մամիկոնեանի դէմ անընդհատ բողոքներ են ստացւում նրա կոպտութեան մասին ևս ինքր , որպէս գորարածնի հրամանատար , ստիպուած է լուծարքի ենթարկել նրա պարտականութիւնը , մօտակայ օրերում : Ապա դորավարը խնդրեց ինձ շարունակել իմ ծառայութիւնս՝ որպէս հրամանատար երկրորդ Ղուկատի որ այժմ քաշւում է դէպի Անի կայարանը եւ կազմում է Ալազեապի Ղուկատը :

Ես ուզում էի մի քիչ հանդատանալ սպայակոյտին կից , բայց դէպքերը զարգանում էին անսովոր արագութեամբ եւ մի օր յետոյ , կլլելով քինին ու նաև զեղահատներ վերցնելով , ևս մեկնեցի իմ երկրորդ Ղուկատը որ արդէն հասել էր Անի կայարան :

Այդ ժամանակ հետեւեալը տեղի ունեցաւ . Թուրքերը ներխուժելով Կարսի պաշտպանութեան ճակատի կենտրոնը , երկաթուղու շրջա-

նում, յետ էին շարժել Խնուսի դունդը եւ սկսել էին տարածուել դէպի աջ ու ձախ, Հայկական բանակի առաջաւոր մասերի թիկունքում եւ հայերը ստիպուած էին եղել քաշուել դէպի բերդի ամբուժիւնների դիժը:

Այդտեղ, սակայն, յաջողուեց պահել թուրքերին հասած թարմ զորամասերը: Այդ ժամանակ թուրքերը դիմեցին մի ծայրայեղ աստիճանի օգնող միջոցի: Նրանք բանադնացիներ ուղարկեցին սպիտակ զբօշներով, բերդի հրամանատարի մօտ, բանակցութեան համար: Բերդի պարէտը խարուեց, հրամայելով դադարեցնել կրակը:

Հայկական զորամասերը դադարեցրին կրակը, իսկ թուրքերը շարունակեցին յարձակումը: Միայն զնդապետ Եֆրեմովի ռուս սպայական զուգարտակը հասկացաւ այդ դաւաճանութիւնը եւ թուրքերին ձկելով որ 300 քայլի վրայ մօտենան, զնդապետի կապեց նրանց. բայց ի՞նչ կարող էր անել մէկ զուգարտակը, ստիպուած եղաւ ետ քաշուել միւս զորամասերի հետ: Այսպէս, թուրքերը, առանց կռուի դրաւեցին կարսի առաջաւոր ամբուժիւնների դիժը, իսկ նրա յետևից մտա առ մաս բոլոր մնացածները:

Բերդի պարէտը հրաման արձակեց հայկական մասերին բերդից քաշուել Մազրա կայարանը, բայց թուրքերին էլ չէին յօրանջում: Նրանց շրջանցող զորամիւսեր արագ անցումներով հասաւ բերդից հիւսիս եւ արդէն մօտ էր հրամանը կատարելու՝ կտրել հայկական զորամասերի նահանջի դիժը դէպ Ալէքսանդրապոլ, երբ հայկական հեծելազորի երկու զուգարտակ, հրամանատարութեամբ վայլուն սպայ, Ալէքսանդրեան Գէորգեան հեծելազորի հոլաք՝ զնդապետ Գէորդ Մելիք Շահնազարեանի (Շահնազարով), յարձակուեց թուրքերի վրայ եւ անշարժութեան մատնեց երկու օր շարունակ: Այս բանը հնարաւորութիւն տուեց հայկական զորամասերին եւ հազարաւոր դադարակումներին անցնել Ալէքսանդրապոլ:

Փա՛ռք ու պատի՛ւ զնդապետ Գէորդ Մելիք Շահնազարեանին: Անցեալ կեսնքի գեղեցիկ օրերը ինձ կապում են նրա հետ:

Օրեր, երբ դեռ հաւատ էր ընծայում մեր թանկագին հայրենիքի փառաւոր ապաղաջին:

Մօտ ապագան վերջ տուաւ Շահնազարեանի կեանքին: Նա ընկաւ բոլշևիկների ճանկը եւ զնդակահարուեց...

ԴԵՊԻ ԵՐԵՒԱՆ ՃԱՄՓԱՆԵՐԻ ՎՐԱՅ

Անի կայարանը, ուր գտնուած էր Հայկական Երկրորդ զուգարտակի սպայակոյտը, գտնուած է Ալէքսանդրապոլ - Երևան երկաթուղու

վրայ, Ալէքսանդրապոլից 30 վերստ հարաւ — արեւելք: Այդ կայսրա-
նից դէպի արեւմտաք, չորս վերստի վրայ, գտնոււմ են Հայաստանի
հին մայրաքաղաք Անիի սքանչելի աւերակները:

Անիի բնակիչները ձուկային հեռացան ժի դարում, և բոլոր քաղաքը
գրաւուեց թուրքերի կողմից եւ աւերուեց, բայց տների պատերը եւ
աշտարակները մնացին: Այդ պատերը զեռ կան եւ հետուից թւում է թէ
դա կենդանի քաղաք է:

Պրոֆեսոր Մառը շատ տարիներ պեղումներ կատարեց այնտեղ եւ
թանգարան հաստատեց այն բոլորից որ դառել էր: Ես որոշեցի, որ
պէտք էր փրկել այդ թանգարանը, բայց իմ ղինուորներս համազարկի
հանդիպեցին Անի քաղաքի փողոցներում: Թուրքերը Անին դրաւել էին
մի ոչ մեծ ջոկատով: Բարերախտարար, Անիի պիտակը թանկարժէք
իրերը հնար էր հղել դուրս բերել դոմէճների վրայ քարձած: Դա մի
հիանալի արձանն էր հայ թաւաւոր Խաչիկի(1), Արձանը ուղարկուել էր
Թիֆլիզի թանգարանը:

Մեզնից աւելի հիւսիս, Արփաչայի երկայնութեամբ մինչեւ
Ալէքսանդրապոլ, կանգնած էր հայկական լին գումարտակը՝
գնդապետ Մորէլի հրամանատարութեամբ: Նա գլխը պաշտպանելու
պարտականութիւնն ունէր եւ չպիտի թողնէր որ թուրքերը երկաթու-
ղագծով դէպի Թիֆլիզ շարժուէին: Իսկ իմ շրջ գումարտակս պաշտ-
պանում էր դէպի Երևան տանող ճամփան:

Եւ ջնայած որ ոչ մէկ հիմք կար, սակայն շատ, շա՛տ միամիտ
ժարգիկ կային որ կարծում էին թէ կռիւր վերջացած է եւ որ թուրքերը
այլեւս հետուն չեն դնայ: Ես՝ հակառակ համոզում ունէի: Ուստի եւ
ես բոլոր միջոցները ձեռք առի, որպէս զի թուրքերը մեզ յանկարծակիի
չբերէին:

Երբեւ Անի կայսրանը հասայ, տեսայ որ ամբողջ կաղմը փոխուած
էր: Այլեւս զկար Խնուսի գումարտակի հրամանատար՝ իմ սիրելի Խնու-
միւսիկին: Զօրամասերը լրացուած էին լաւ սպաներով եւ ես, այն ժա-
մանակ գեռեւս կապիտան, իմ հրամանիս տակ ունէի երկու դիպապետ-
ներ, բայց ես ընդհանուր սպայակոյտի անդամ էի եւ այդ պարտակա-
նութիւնն ստանձնած, ուստի եւ իրաւունք ունէի հաշուի չտանելու
գինուորական աստիճաններ:

Անի կայսրան հասնելով, առաջին օրերը մենք հանգստանում էինք:
Լուռ էր. տաք: Պատերազմական օրի՛ր: Ներքեւը՝ Արփաչայն էր, նրա
ափերը ծածկուած էին կակաչներով որ ձուլում էին հետուն: Իսկ

1) Միսայ է, պէտք է լինի՝ Գագիկի արձանը: Ա. Ա.

այնտեղ, կապույտ երկնքում՝ Արարատի ծիւնածածկ դադաթը: Արփաչայը փոթորկոտ, լեռնային գետ է և քիչ ծանծաղուտներ ունի. մենք կանդնած էինք այդ ծանծաղուտներից մէկի՝ Անսիսկի մօտ, իսկ յաջորդ ծանծաղուտը՝ Կալդինականը՝ 50 վերստի վրայ էր դէպի հարաւ:


Այո, մենք հոգեպէս ու մարմնապէս հանդստանում էինք, վարժեցնում՝ լրացուցիչ մասերը, կարկատում էինք կօշիկները, քուն էինք առնում, տաքանում էինք Արփաչայի արեւկող արեւրին:

Բայց հետադառնելու և հարեւանների հետ կապ պահելու գործը լաւ էի գաւաւորել: Գիտի ծանծաղուտը դրաւել էր մի փոքրիկ զօրամաս ղեղապահատ Մորէլի սպայակոյտի հետ կապ պահող մի սպայ:

Իմ ռադիո-կայանս եթերից որսում էր հարեւան բոլոր զօրամասերի կարգադրութիւնները: Կարեւորները անմէջապէս ղեկուցւում էին ինձ:

Թուրքերը, սակայն, շուտով սկսեցին կուտակուել Ալէքսանդրապոլի մօտերը, իսկ Արփաչայի միւս կողմում, մեր դիմաց, նկատւում էին Թուրքերի ինչ որ շարժումները թիկունքում: Թուրք զօրքերը գնում էին դէպի Ալէքսանդրապոլ: Ըստ բնակչութեան հազորդած տեղեկութիւնների, Թուրքերը Ալէքսանդրապոլի մօտ ղետեղում էին նոր մարտիոցներ:

Ես իստացրի կապը ղեղապահատ Մորէլի լին գումարտակի սպայակոյտի հետ, որ կանդնած էր Բայանդուր կայարանում, մեզնից դէպի հիւսիս: Մայիս 15ին ևս հետախօսութիւն տեղեկացայ լին գումարտակի



Վերջին քարտիկը Զեյն Ալիեւի, 1918 թ. ՄԱՍԿՈՎԱՅԻ ՄԱՐՏԻ 21-ԵՐ ՄԱՅ 1918 ՎՈՃԵՆԻ ՄԱՍԿՈՎԱՅԻ ՄԱՐՏԻ 21-ԵՐ ՄԱՅ 1918 ՎՈՃԵՆԻ

ստրաշակոյտից, որ կտայը դորաբաժնի սպայտիկոյտի հետ կտրուած է եւ յայտնի չէ թէ նա ո՞ւր է գտնուում: Եւ որ Ալէքսանդրապոլում ինչ որ բաներ են տեղի ունենում:

Միաժամանակ իմացայ նստել, որ թուրքերը, Բաջանդուր կայարանի շրջանում սնցնում են Արփաշայի արևելիան տիրը, ուր կանգնած էր Ղին գումարտակը: Նրա հետ ևրկաթուղադժի հեռագրային կապը խզուել էր: Լուում էր հրետանու կրակոց:

Ես հետախոյզներ ուղարկեցի, որպէս զի կապի մէջ մտնեմ Ղին գումարտակի հետ: Բանից երևաց, որ նա կռուով նահանջում է դէպի Համամլու: Ես դիրքեր դրաւեցի փոքրիկ լեռնաշղթայի վրայ որ յարմար էր սլաշտպանութեան համար: Մեր ձախ թելը ապահովուած էր Արփաշայով ուր ջուրը խորն էր, 50-60 մեթր լայնք ունէր գետը:

Աջակողմից իմ վաշտը պաշտպանուած էր Ալադեադ լեռան յինորմներով (ժայռեր): Եետ քաշուելը դէպի Երևան անյոյս էր - նեղ առափնեայ շիրտով: Մայիս 16ին իմ հետախոյզների եւ Ալէքսանդրապոլից փախչողների հարցաքննութիւնից լրիւ պատկեր ստացայ անցուղարձի մասին:

Թուրքերը յանկարծակի յարձակման էին անցել եւ գրաւել Ալէքսանդրապոլը: Այնտեղ սարսափելի կոտորած էր տեղի ունենում: Թուրքերը ոչնչացնում էին հայ բնակչութիւնը, իսկ երբեմն նաեւ՝ ուսուսպաների: Այսպէս, նրանք այնտեղ սպանել էին հեծեալ հրետամիր՝ Բորիս Իոսիֆովիչ կարլլիցիուն:

Թրքական հետախոյզներն արդէն Բաջանդուր կայարանումն էին, իսկ քրդական հեծելազորը ուժեղ միացումներով շարժւում էր դէպի Ալադեադի յինորմները, այսինքն շրջանցում էր մեր աջ թելը ևւ գնում էր դէպի մեր թիկունքը:

Անի կայարանում մնալը մեծ սխալ կը լինէր, ուստի ես որոշեցի ետ քաշուել դէպի Ալադեադ կայարանը, որ 6-7 վերստ հարաւ էր գտնուում Անի կայարանից, որպէս զի շպաշարուէինք այդ նեղ տեղում:

Երեկոյան հրամայեցի ետ քաշուել: Պայթեցրինք ջրմուղը որ ջուր էր մատակարարում ևրկաթուղադժի շրջանին 120 վերստի վրայ, եւ դիշերուայ մէջ կատարեցինք փտանդաւոր տողանցքը: Այս բանը կատարեցինք պատահ ժամին, որովհետեւ քրդերը լեռներից արդէն կրակում էին մեր վրայ: Մեր սպաններից մէկը սպանուեց: Նրա անունը չեմ յիշում, միայն գիտեմ որ նա ծառայել էր Ռուսաստանում, Գվարդիական հետեւակազորի մէջ: Իմ ջոկատի կազմն էր՝ 300 սուլինաւոր ևւ 120 սուսերակիր:

Իմ առդիտկայանս փերջապէս կապուեց գորաբաժնի սպայտիկոյտի

հետ որք, բանից երեւաց, Ղարաքիլիսէ էր անցել: Վերջապէս տեղեկանք եւ հրաման ստացայ:

«Յետ քաշուել մինչեւ Արաքս կայարանը, ուր սկսուած է Երեւանի քաց հովիտը»:

Թուրքերը, զգուշութեամբ, հետեւում էին մեզ, իսկ նրանց առջեւից, հետախուզելով, գնում էր քրդական հեծելազոււնը:

Արաքս կայարանում մենք մեքենայաբար մտանք հայկական լին զօրամասի կազմի մէջ, որի վարիչն էր զօրավար Միլիկովը (Միլիկեան): Իմ ջոկատս ենթակայ գարձաւ հրամանին ղնդապետ Բէկ-Փիլրուսեանի որ իր ջոկատով գտնուած էր Սարգարապատ գիւղում: Այնտեղ անցանք եւ մենք:

Նոյն օրը երեկոյեան ես սկսեցի կատարել սպարապետութիւնս որպէս Սարգարապատի ջոկատի սպայակոյտի վարիչ: Թուրքերը արդէն Արաքս կայարանումն էին:

Եւ այսպէս, մեր տեղի տուող զօրամասերը հիւսիս-արեւմուտքից մօտեցան եւ միացան Սարգարապատ կայարանի մօտ՝ զօրավար Դանիէլ Բէկ Փիլրուսեանի զօրքին:

Բէկ Փիլրուսեանը էրդրումի նշանաւոր հերոսն էր, նա ստանձնեց հրամանատարութիւնը բոլոր զօրամասերի:

Գնդապետ Պետր (Պետրոս) Բէկ Փիլրուսովը (Փիլրուսեան) մեկնեց Երեւան: Նա՝ «յարժար չէր ժամանակին»: Անձամբ՝ քաջ, սակայն անվճռական էր, իսկ այստեղ վճռուած էր Հայաստանի ճակատագիրը եւ պէտք էր դարձնել մեծ ռիսկով, որովհետեւ ոյժերը քիչ էին, իսկ Սարգարապատի ծածուկն էր գտնուում Երեւանը՝ Հայաստանի մայրաքաղաքը: Հայաստանը այդ ժամանակները բոլոր կողմերից շրջապատուած էր հակառակորդներով, որոնք ուղղում էին Փիլիքապէս ոչնչացնել հայերին:

Այն օրից, երբ Թուրքերը վրացիների հետ դաշինք կնքելով իրենց ձեռքն էին ստեղծում Ալէքսանդրապոլ-Թիֆլիզ-Բաղու երկաթուղայինը, հայերը կտրուած էին ամբողջ աշխարհից, քանի որ դէպի արեւելք գտնուում էին Թաթարները, իսկ հարաւից Արարատ-Աղբի դաղ՝ գրասել էին քրդերը:

Երջապատուած Հայաստանում, բացի տեղական ընակչութիւնից, կենտրոնացել էին մօտ մի քանի հարիւր հազար դաղթական հայեր եւ քիւրդ-ձեզիլիներ (ստատնայապաշտ), այդ վերլու սողկերին էլ Թուրքերը ոչնչացնում էին ամէն անգամ, երբ կարող էին այդ անել:

Եւ այսպէս, Սարգարապատը վերջնախաղն էր: Զօրավար Դանիէլ Բէկ Փիլրուսեանը այդ վճռական պահին յարժուր եւ արժանի՝ անվճեմ

զինուորական վարիչն էր :

Մական մեր ուղիքը դեռ հաւաքուած չէին եւ մեր մօտեցող ջոկատը սկսեց «սահեր» թիկունք, իսկ թուրքերն արդէն ւերեւացին Արաքս կաշարանում :

Մայիս 20ին ես կանչուեցի Երեւան, որպէս զի ցուցմունքներ ստանալի զօրավար Սիլիկեանից որ հրամանատարն էր մեր զօրաբաժնի : Զօրավար Սիլիկեանը հրամայեց յետ քաշուող զօրամասերին որ նորէն գրուեն Սարգսրապարտը, ինչ որ գործադրուեց Մայիս 22ին :

Մայիս 22ին Երեւանում, թէև ես հիւանդ էի, կանչուեցի հանրապետութեան կառավարութ. ապուլայ վարչապետ Խատիսեանի կողմից եւ հրաման ստացայ անմիջապէս մեկնել Սարգարապատ, ուր թուրքերը նեղն էին գրել զօրավար Փիրումովի ջոկատին որ դանուում էր ծանր գրութեան մէջ :

Ինձ շոգնչարժ տրամադրեցին որի վրայ հասայ մինջև Սարգարապատ կաշարանը, Մայիս 22ի երեկոյեան : Եողեշարժը կաշարանին երկու փերատ մնացած կանդ առաւ, ես ցած իջայ եւ ոտքով քայլեցի երկաթղծի ուղղութեամբ : Հիռում, մէկ վերստի վրայ, նկատեցի մարդիկ որ նստած էին երկաթղծի մօտ : Թուրքերը, ժամանակ առ ժամանակ, թողանօթի ուղիքներ էին արձակում երկաթղծի երկայնութեամբ բլուրների վրայ գանուող հայկական զօրամասերի վրայ : Ես մօտեցայ նստածներին. բանից երեւաց որ դա զօր. Դանիէլ Բէկ Փիրումեանի սպայակոյտն էր, որին եւ ներկայացայ : Իրապէս, գրութիւնը շատ դժուարին էր : Հայերը կանգնած էին երկաթղծի երկայնութեամբ, իրենց աջ թեւը յետ պահելով, աչիւնքն լաց թողնելով ճամբան դէպի թիկունք, դէպի Երեւան :

Պահեստի ուղիքը չկային : Մեր դժած նախապիծը ցոյց է տալիս գրութիւնը Մայիս 22ի երեկոյեան :

Արեւը մայր էր մտնում : Քարակղերի վրայ կռացած, նստած էինք մենք զօրավար Փիրումեանի հետ եւ քննում էինք թէ ինչ պիտի անել դիչերը :

Իրութիւնը ուղիքական է : Թուրքերի ուղիքը անյայտ են :

Մեր առջև, բլուրների վրայ, ակնյայտ է որ նրանց յառաջապահն է :

Վճռում էր Հայաստանի ճակատադիրը եւ հայ բնակչութեան վտիճանը : Գիչերը մենք կաղձեցինք մասնակի պահեստի ուղիք : Մեր ձախ թեւը մի քիչ յետ տարինք. աջ թեւի ետեւ առաջ քաջեցինք երկու վաշտեր երկու թնդանօթներով : Հետախօսով թոյլտուութիւն ստացանք զօրավար Սիլիկեանից կարգադրութիւն անել Հասան Փաշայեանի

Խիզնաուրի ջոկատի նկատմամբ (Երզնկայի դռանը) :

Նրան հրաման տրուեց առաւուտեան շարժումը դիպի արեւմուտք, դուրս գալ թուրքերի գրաւած լեռնաշղթաների թիկունքը եւ հրետանային կրակ բանալ նրանց վրայ :

Կարն ասած՝ կռուի յառակազգիծը հետեւեալն էր .- Մարդարապատի ջոկատը իր յարձակումով թուրքերին դամուձ է իրենց դիրքերին, հնարաւորութիւն տալով Խիզնաուրի ջոկատին դուրս գալու նրանց խորը թիկունքը եւ այնտեղ կռիւ սկսել թիկունքացին ճամփաների վրայ : Այդ ժամանակ Մարդարապատի ջոկատի մասերը պիտի անցնեն ընդհանուր յարձակումի՝ ճակատից :

Մրադիրը լաւ էր, լայն կը յաջողուէ՞ր իրագործել եւ Խիզնաուրի ջոկատը շէ՞ր հանդիպի թուրքերի համապատասխան ոյժերի :


Զօրավար Յէկ Փիրումեանի սպայակոյտը գիշերանց փոխադրուեց Մարդարապատ կայարանը, որտեղից եւ կատարուեւ էին բոլոր կարգադրութիւնները : Զօրամասերի մէջ տեւապին դորժոնէնութիւն կար : Դուրս էին բերուեւ մասնաւոր պահեստիներ, տրուեւ էր ամէն անհրաժեշտ բան : Բերուեւ էին փամփուշտներ : Լաւ կերակրուեւ էին մարդկանց, մինչեւ փակ դիւնի էր տրուեւ : Բոլորը հասկանուեւ էին յաջորդօրոքայ հսկայական նշանակութիւնը :

Գիշերը մենք մի կերպ ննջեցինք ուր ուր պատահեց : Բոլորը յուզուեւ Ֆին :

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՔԱԿԱՏԱՍԱՐՏԸ

ՄԱՅԻՍ 23, 1918 Թ.

Հապիւ լոյսը բացուել էր որ բոլորս սաքի էինք եւ արեւի առաջին ճառագայթների հետ, ամբողջ ճակատի վրայ, սկսուեց հրազենների կռիւ : Կրակուեւ էր հրետանին, երբեմն ճարճատուեւ էր զնդացիքը :



Թուրքերը մի քանի անգամ փորձեցին իջնել իրենց բլուրներից եւ յարձակուել, բայց ամէն անգամին էլ ուժեղ կրակով նրանց ստիպում էին յետ դառնալ :

Զօրավար Փիրուսեանը, իր կարմիր աստառով զինուորական վերարկուի մէջ, քայլում էր յետ ու առաջ եւ, վերջապէս, չհամբերելով, մեկնեց դէպի կռուող շղթան : Մեկնելիս, նա ինձ յանձնեց կռուի դեկավարութիւնը, ասելով .

- Կապիտան, դուք արդէն ամէն ինչ դիտէք, զեկավարէք կուրբ ինչպէս որ մենք որոշած ենք :

Ես քարձրացայ ջրմուղի վրայ, որտեղից ամէն ինչ երեւում էր ասես աչի մէջ : Առաւօտեան ժամը Գին հիւսիսում, Խիզառարի ջուկատի կողմում, բլուրների յետեւում երեւաց փոշու ամպ, որը դանդաղօրէն սահեց դէպի արեւմուտք . ջուկատը առաջ շարժուեց :

Մեր զօրամասերը, 1000 քայլ հեռաւորութեան վրայ Թուրքերից, դանդաղ առաջ էին շարժուում եւ արդէն մօտենում էին թշնամուն 400 քայլի վրայ : Առջեւից, իր վերարկուի կարմիր աստառը դէպի դուրս հագած, քայլում էր զօրավար Փիրուսեանը . սպա, նրա հրամանի վրայ, շղթաները պառկեցին :

Յերեկուայ ժամը 1-ի մօտ, փոշու ամպը անցաւ Թրքախան թելի թիկունքը, իսկ ժամը 2-ին Թուրքերի թիկունքում որստաց հրետանին :

Ամէն անգամ որ Թուրքերը անցնում էին դրոհի, մեր աջ թելը (2 սլաշտ, 2 թնդանօթ) կարկում էր նրանց կողերին, Թուրքերը կանդ էին առնում եւ իրենց շղթան պառկեցնում :

Ես համահարզներին միջոցով յղեցի նախօրօք պատրաստուած հրամանը՝ «ՅԱՐՁԱԿՈՒՆԵ՛Ղ» : Զօրավար Փիրուսեանը ինքն ստացաւ իր հրամանը . . . Շղթաները ոտքի ելան եւ «ուռա՛» կանչերով յառաջ վազեցին, իսկ Թուրքերը խուճապի մատնուեցին, սրով հետեւ նրանց թիկունքը անցած ջուկատը կրակ էր բացել Թուրքերի պաշարակիր սայլերի եւ թիկունքի վրայ : Մի սահ՝ եւ Թուրքերը փախուաւի դիմեցին լքելով իրենց ամբողջ ռազմամթերքը, պաշարակիր սայլերը, իրենց վիրաւորները եւ սպանուածները :

Թուրքերի յետեւից վազում էին հայերը կրակելով, սրաթափչ տրչաւում էին Ձէյթունեան հեծելազուանդը զնդապետ Սալիբէկովի զլխաւորութեամբ եւ մեր հարիւրակները : Թուրքերը փախան 50 փերստ : Նրանք փախան, ցրուեցին լեռներով մէկ : Նրանց կարող էին հաւաքել միայն մի քանի օր յետոյ :

ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ ՇԱՀՈՒԱԾ ԷՐ. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՓՐԿՈՒԱԾ ԷՐ

Միաժամանակ Սարգսրասրատի կռուի հետ, թուրքերը փորձեցին ներխուժել Հայաստանի սիրտը առելի հիւսիսից՝ Բաշ Արարանի վրայով, բայց չարաչար ջախջախուցին Գրաստամառ Կանայեանի (Դրօ) ձեռքով: Այնտեղ եւս եղացեալ, եւ հրաշքով ողջ մնացի, որովհետեւ յանկարծ ընկալ թուրք պահակների շրջանը, հողիւ 20 քայլ հեռու:

Գաղաղամ թուրքերը ոտքստիկելի ջարդ կաղձակեցան Ղարաքիլիսէում: հացերը հաչում էին, սր աշխակ կոտորուեցին առելի քան 8000 հայեր եւ ռուսներ որոնք փախել էին Ալեքսանդրապոլից:

Մայիս 26ին Կոստանեան Ալեքսը լուծուած յայտարարեց «Անդրկովկասեան Դաշնակցոյին Հանրապետութիւն»ը, իսկ Վրաստանը յայտարարեց իր անկախութիւնը: Մայիս 28ին Ազէրբեյջանը անկախ յայտարարեց իրեն: Իսկ Մայիս 28ին Հայաստանը: Իսկ թուրքիան հաշտութեան պայմաններ կնքեց Բաթումի մէջ:

Դժբախտաբար հայ ներկայացուցիչները Բաթումի խաղաղութեան ժողովին լուր չունէին հայերի փայլուն յաղթանակի մասին, Սարգսրապատի տակ, ապա թէ ոչ խաղաղութեան պայմանները թեթեւ կը լինէին Հայաստանի համար:

Թու՛ւմ էր թէ պատերազմը թուրքերի հետ փերջացած է եւ խաղաղ օրեր պիտի դաշին, բայց Անդրկովկասի ժողովուրդները հանդիսաւ շմայցին: Մարտական յախումները շարունակու՛ւմ էին նրանց միջեւ:

(ՎԵՐՉ)



ՎԵՐՋԱԲԱՆ

Թարգմանաբար ներկայացրինք նախկին ցարական բանակի սպայ, ապա՝ Հայկական Բանակի ղեկավար եւ սպայակոյտի տնօրէն՝ Ալեք. սանդր Կ. Ծնէուրի նկարագրութիւնը Կարսի կռուի եւ Սարդարապատի ճակատամարտի, դեկափարների անուկներով, ռազմադաշտերի յատակագծերով, տեղադրութիւնների մանրամասն թուարկումով, Հայկական դուռերի անուկներով եւ այլն:

Նկարագրութիւնը մասնակցող-աւանտուսի դրէին է պատկանում. Հայազգի չէ վկան, էլ դաս-լսթարինդիակին ծաղումով ուսուսականաւոր սպայ է. հետեւաբար իր նկարագրութիւնը առարկայական է, պատմական նշուարները եւ անկերպի:

Գնդապետ Ալեք. սանդր Կ. Ծնէուրի թուած անուկների մէջ ո՛չ տասնապետ Բազրամեան կայ, ո՛չ ենթասպայ Վարդանեան եւ ո՛չ էլ ոմն Մուրադեան եւ Արաքսեան, որոնց հերոսացնել փորձել է «սովետահայ պատմագիր» Յ. Թուրչեան, Սարդարապատի հերոսամարտը համարելով... բուլղերիկեան: Մինչդեռ մենք մեր «նախարան»ի մէջ փաստեր թուեցինք, իբրեւ աւանատես, որ 1917 - 1918ի Հայաստանի ճակատի կռիւներին բուլղերիկները քայքայում էին ճակատը իրենց պրոպագանդով, յայտարարելով հայ դինուորներին թէ՛ «Թարքը մեր բարեկամն է, նա էլ մեզ նման բանուոր է, մի կրակէք նրա դէմ» ...

Հետաքրքրական է թէ ինչո՞ւ համայնապարհայ պատմագիրները յիշատակութիւն անդամ չեն անում Բաշ Արարանի եւ Հարաքիլիսէի հերոսամարտերի մասին, երբ նոյն ճակատների վրայ եւս թուրքը շախշախիչ պարտութիւն կրեց:

Մենք կը պատասխանենք: Որովհետեւ Բաշ Արարանի հերոսամարտի դեկափար - հրամանատարն էր դաշնակցական Գրոն, իսկ Հարաքիլիսէի ճակատամարտի դեկափար-հրամանատարն էր՝ հսկարաբուլղերիկ Զորավար Թ. Նապարրկյեան. որովհետեւ նոյն ճակատի վրայ Գ. Նժդեհի մի կրակատես ճառի հետեւանքով հաղաբար հայերը դէնք վերցրին եւ դէպի ճակատ խոյացան:

Հայաստանում, 1968ին, Սարդարապատի հերոսամարտի 50ամեա-

կի առթիւ, յուշարձան պիտի կանդնեցուի Սարգարապատում, ըստ Սոփեա Հայաստանի զեկաւարներէ յայտարարութեան. աքոյ, այդ յուշարձանի սրատուանդանի վրայ պիտի գրուին իսկականն մտակցողներն եւ հակատամարտը շահողներն անունները, եւ ո՛չ թէ բոլշեւիկ տասնամարտահեթասպայի: Պատմութիւնը փեղագիւրոյ սոփեա պատմադիր» Յ. Թուրչեանն այս պարագան թող ի մտի ունենայ:

Հայկական Բանակի սպայակոյտի անդամ, գնդապետ Ալեքսանդր Կ. Շնչուրի նկարագրութեան մէջ հետեւեալ ուսու եւ հայ զինուորականներն նն մասնակցած եւ զեկաւարած Կարսի տակ կռիւը եւ Սարգարապատի ճակատամարտը:—

ՌՈՒՍ ՁԻՆՈՒՈՐԱԿԱՆՆԵՐ

1. Գնդապետ Մորէլ, 2. Դեր-գործար Չինկելիչ, 3. Գնդապետ Սպիցըն, 4. Գնդապետ Կաֆիւս, 5. Գնդապետ Սկլիարովիչ, 6. Գնդապետ Եֆրեմով, 7. Գնդապետ Սմեալինսկի, 8. Զորավար Բարաթով, 9. Գնդապետ Նելսինսկի, 10. Գնդ. Բորիս Իոսիֆովիչ Կարբիցկի, 11. Գնդապետ Ալեքսանդր Կ. Շնչուր:

ՀԱՅ ՁԻՆՈՒՈՐԱԿԱՆՆԵՐ

1. Դրօ (Դրաստամատ Կախաշեան), 2. Գնդապետ Թորոս, 3. Սպայ Ամիրխանեան, 4. Ենթասպայ Ահարոնեան, 5. Ենթասպայ Բաղդատուանի, 6. Գնդապետ Հասան Չալալեան, 7. Գնդ. Միրիմանով, 8. Գնդ. Բէյ Մամիկոնեան, 9. Մուրազ, 10. Սեպուհ, 11. Սպայ Չաքարեան, 12. Գնդ. Կորյանեան, 13. Գնդ. Գէորդ Մելիք Շահնազարեան, 14. Զորավար Նազարբէկեան, 15. Զորավար Սիրիկեան, 16. Զորավար Դանիէլ Բէկ Փիրուճեան, 17. Գնդապետ Պետրոս Բէկ Փիրուճեան, 18. Գնդապետ Հասան Փաշայեան, 19. Գնդապետ Սալիբէկով:

Սրանք էին Կարսի կռուի, այս Սարգարապատի, Բաշ Արարանի եւ Չարաքիլիսէի հերոսամարտեր ժողովները: Այս անձնակեր եւ քաջարի հայրենասէրներն էին, որ երբ կողմսեան ճակատի ուսական բանակը լքեց ամէն ինչ, բոլշեւիկներն թելադրանքով եւ նշանաբաններով, եւ անդուխտ հօտի պէս «դէպի տուն», Ռուսաստան քաշուեց, Հայաստանը եւ հայ ժողովուրդը նետելով ցեղասպան թուրքի արիւնոտ ժանիքների առջնւ, այդ միեւնոյն ուսու եւ հայ զինուորականներն էին որ փրկեցին մեր հայրենիքը եւ մեր ժողովուրդը:

Այս ցանկերի մէջ բոլշեւիկ չկա՛յ. ո՛չ մէկ հատիկ բոլշեւիկ զոհուած է այդ ճակատների վրայ, այլ զոհուած են դաշնակցականներ եւ հայ ժողովրդի անկուսակցական զաւակներ:

Բրեւտ Լիտուսկի դաշնագիրը, որի կնքումը յայտարարուեց

1918ի Մարտ 3ին, եւ որով թրքահայաստանն ամբողջ, ապա նաեւ
Կարսի եւ Արդահանի շրջանները յանձնուած էին թուրքիային, բոլշե-
ւիկների ձեռքով, փաստօրէն կնքուած էր 1918ի Փետրուարին.
տանք փաստեր:

«Փետրուար 25ի (1918թ.) Երեկոյեան, Անդրկովկասեան Կոմի-
տարիատը Վեհիք փաշայից ստացաւ մի նոր հեռագիր, որ ասում էր.

«Թիֆլիս, գլխաւոր կրամանատարից, պատեմն Անդրկովկասի
Կառավարութեան նախագահին...»

«Հաղորդում եմ թողացի հէնց հիմա ստացուած երկու Ֆրանսիայէն
հեռագիրները: Առաջինը՝ կովկասեան ուսուցիչի ղրխաւոր հրա-
մանատար Զօր. Լեյբելիսիկին: Չերդ գերագահացութիւն, Ռուսաստանի
փառապանծ Հանրապետութիւնը՝ համաձայնելով պարսիկ Բաթումի,
Կարսի եւ Արդահանի շրջանները՝ հէնց նոր այդ ժամին ստորագրեց
հաշտութեան դաշնագիր: Ի հետեւանս այդ բանի պատիւ ունեմ հա-
ղորդել ձերդ գերագահացութեան, որ ես այս պահուս ստացայ փմ
սպարապետից մի հրովան, որի հիման վրայ ինդրում եմ ձեզ ամենա-
կարճ ժամանակում դատարկել յիշեալ շրջանները: Սպասելով ձերդ
գերագահացութեան սրտաստիանին՝ ինդրում եմ ընդունել ամենախորին
յարգանացս հաւաստիքը: Վե Հի Բ Մ է Հ Մ է Տ» 1):

Ուրիշ փաստ եւս, նոյն դրքից.

«Փետրուար 18ին (1918 թ. Ա. Ա.) Հայկ. Կորպուսի սպայակոյտի
պետ. Զօր. Վիշինսկին հեռագրում էր ղրխաւոր հրամանատարութեան-
«Կորչմայի գորամարը հասաւ Իլիջա. Ժամը 16ի մօտերը, Կորչմայի
կողմից, երեւացին ձիաւոր քիւրդեր, որոնք, մեր առաջապահների
հետ հրացանածգութիւն ունենալուց յետոյ, շուտով քաշուեցին:
Խնուսի ուղղութեամբ, Սուլուխի Կոմսերջի մօտ, թիւրք ներկայա-
ցուցիչը կանչեց մեր սպային եւ հարցրեց, թէ ինչո՞ւ չեմք հեռանում
քիկուեմք: Թիւրք ներկայացուցչի ասելով՝ քիւրդերն արդէն բաշտիկ-
ներն հետ կնքել են կաշտութիւն, որով մենք պէտք է քաշուեմք միւս
Սարիղամիշ՝ յանձնելով քիւրդերին ամբողջ պաշարն ու զեմքը» 2)
(Ընդգծումը իմն է: Ա. Ա.)

Այս անհերքելի փաստերից պարզ է, որ դեռեւս 1918թ. Փետրուա-
րին բոլշեւիկեան իշխանութիւնները թրքահայաստանը եւ Բաթումի,
Կարսի ու Արդահանի շրջանները յանձնել էին թիւրքերին:

1) Տե՛ս Ա. Վրացեանի «Հայաստանի Հանրապետութիւն» կառուրը,
էջ 67, Փարիզ, 1928 թ.

2) Տե՛ս հայն տեղը, էջ 72:

Յ. Թուրքեանները, պատմութիւն դրելիս, թող նկատի առնեն սոյս անհերքելի փաստերը եւ պատմապրութիւնը շղարձեն ենթակա-
յական, զէն ու սխի պատմութիւն:

Պատմական անհերքելի փաստ է, որ բուլղարիկեան Ռուսաստանը
թիւրքերին յանձնեց ամբողջ թրքահայաստանը, այլեւ Կարսն ու
Արդահանը, հայ ժողովուրդին թողնելով ցեղասպանի արիւնադանգ
ժանիքների առջեւ, թայց հայ ժողովուրդը, հայ անձնուէր ու հայքենա-
սէր զինուորականները, զեկալարութեամբ Հայ Յեղափոխական Դաշ-
նակցութեան, Մարդարապատի, Բաշ Արարանի եւ Ղարաքիլիսէի հե-
րոսամարտերով սահման դրին ցեղասպանի յաւակնութիւններին եւ
կերտեցին Հայաստանի Անկախութիւնը, Հայաստանի Հանրապետու-
թեան Խորհրդարանի վրայ պարզելով հայկական Եռագոյն դրօշը:

(ՎԵՐՁ)

Ա. ԱՄՈՒՐԵԱՆ

